ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Դ· ՏԱՐԻ· 1863· ԹԻՒ Ե·

ՄԱՅԻՍ

ԱՂԲԻՒՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՑՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՅԱՄԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԵՍԱՌՆ ՄԵՐՈՅ ՈՒ ՓՐԿՉԻՆ, 1778· ԵՒ ՀԱՅՈՑ ՌՄԻԷ· ԹՈՒԻՆ, ՅԱՄԵՒԱՆՆ ՕԳՈՍՏՈՍԻ, Ի ՂՈՒԻՄ ԵՐԿՐՈՂ ԵՂԵԱԼ ԲՈԼՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԱԶԳՔՆ ՀԱՅՈՑ, ՀՐԱՄԱՆԱՒ ՄԵԾ ԿԱՅՍԵՐՈՒՀՈՅՆ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼՈՒՀՈՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍՏԱՅ ԵԿԱՏԱՐԻՆԷ ԱԼԷՔՍԻՈՓԼԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ· ԵԼԻՆ ԱՆԱԻ՝ Ի ՀՐԱՍ ՔԱՂԱՔԻՑ ԱՅՍԻՆՔՆ Ի ԿԱՖԱՅՈՒ, Ի ԲԱՂՉԱՍԱՐԱՅՈՒ, Ի ՂԱՐԱՅՍՈՒՅՈՒ, Ի ԳՕՂԼՈՎՈՒ, ԵՒ Ի ՀՐՋԱԿԱՅ ՂՍԱԲԱՅԻՑ ԵՒ ԴԻՒՂՈՐԷՑ ՆՈՅԻՆ· ՅԵՏ ՄԵԾԻ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ ՍՈՒԼԹԱՆԻՆ ՕՍՄԱՆՑՒՈՅ, ՅՈՐԺԱՄ ԶՂՈՒԻՄ ՈՐՁԱԿԵԱԼ ԻՐՇԽԱՆՈՒԹԵՆԷ ՆՈՐԻՆ ԵՒ ՏՈՒԵԱԼ Ի ԽԱՆՆ ԹԱԹԱ-

բաց ինքնագլուխ արար զնա: Բայց զազգն քրիստոնէից, Հայոց և Հռոմոց՝ սեպհականեաց Ռուսաց, զորս՝ և ի ձեռն զօրավարին Ռուսաց ենարալ պօռուչիկ Ալէքսէի Վասիլիչ Սուվորովին. հանեալ անտի, երեր յերկիրս Ռուսաց: Մեր ազգին Առաջնորդ, էր Փուրսայեցի Պետրոս վարդապետ ոմն: Եւ ի սմին թուականի, եկին ի դաւառն Աղուվանք:

Ի 1779 թուին, յամենայն Յունվարի, վախճանեցաւ ի Սամարա նոյն Առաջնորդ Պետրոս վարդապետն և անդ թաղեցաւ:

Յամս երկուս, վրանաւ պանդխտեցան ժողովուրդքն մեր ի Սամարա և ի Կատարինէսլաւ և ի շրջակայս նոցին, և ինասեցան բազումք մարդիկ պէս պէս նեղութեամբք, յարևոյ՝ յանձրևոյ և ի գողոց, և բազումք ևս՝ ի կսկծանաց. և ևս՝ քահանայք և ժողովուրդք ևծերք, մեռան. յիշելով զծննդեան տեղիս ի բանից, զվանորայսն և զեկեղեցիսն:

Յայսմ ամի, մինչ մեք ի Հաշտարխանու եղեալ գնացաք ի Մոսկով, գնալ անտի ի Պետերպօլք վասն օգութեան չքնաղաշէն եկեղեցւոյն նորին, զոր կառուցեալ էին Ջուղայու դաշտի Եղիազարեանց Եղիազար Աղնիւ Աղայի որդիքն, Աղնիւ Աղայ Յովհաննէսն՝ աղայ Մինասն՝ և աղայ Յովակիմն, անկաւ լուծ հովուութեան նոցին ի վերայ մեր: Եկին առ մեզ և ի հասարակութենէ նոցին, անձինք երևելիք. որք էին կապիտան Պարոն Յովհաննէսն Արրահամեան՝ Փառակեցի Պետրոսի որդի և մեր գանձապետ և վէքիլ՝ Պարոն Մկրտիչն՝ մահտեսի Դանիէլն և այլք: Եւ յառաջ քան զսոսա, ի Ղռիմու երկու դէվուրթաթ ևս էին առաքեալ, Փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւնն, որ անդէն վախճանեցաւ ի Պետերպօլք, և Փառակեցի տէր Ոսկանի որդի Պարոն Կարապետն: Գնայեալ մեր ի Սանկտ-Պետրբուրգ, և գտեալ անդ մեր զշնորհս ի Կայսերական Մեծութենէն և ի պայծառափայլ իշխան Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինէն, որ էր տեղակալ մեծ թագուհւոյն և խնամակալ ազգի մերում. զաղերս մատուցաք վերոյ իշխանաքն ի ձեռն Աղնիւ Աղայ Յովհաննիսին Եղիազարեանց, ընկալաք զկատարումն խնդրանաց մերոյ, զԱմենաողորմածագունեղ հրովարտակ և զյատուկ տեղ և բնակութիւն, զտեղին այն

հին ի Յարսկի Սելոյ և արժանաւորեցաք համբուրել զձեռն և խօսիլ ընդ նմա Ազնիւ աղայ Յովհաննիսիւն: Եւ ի Յունիսի 4, առ ժառանգն նորին, Մեծ Իշխան Պաւլ Պետրովիչն զբնացաք, որք սիրով ընկալան զմեզ և խօսեցան քաղցրութեամբ:

Ի սմին թուոջ՝ Նոյեմբերի 4, մտաք մեք ի Նորաշէն քաղաքս Նախիջևան մեծաւ հանդիսիւ, զոր արկեալ են ի կազէթ ազգքն Ռուստայ, որք եղեն յայն օր:

Ի սմին թուոջ՝ Յուլիսի 26, ի տօնի Վարդավառին, քրիստնաջան մշակն և մեծ վաստակաւորն եկեղեցւոյն Քրիստոսի և ծնողն իմ հոգևոր, սուրբ հայրապետն Սիմէօն, հանգուցեալ էր ի Քրիստոս և սուգ մեծ թողեալ ի վերայ բոլոր եկեղեցեացն և ազգին Հայոց:

Ի սմին թուոջ՝ Օգոստոսի 8, ընտրեալ և օծեալ էին ի կաթուղիկոսութիւն զկարնեցի Ղուկաս Սրբազան Արք եպիսկոպոսն համեստաբարոյ: Յետին թուղթ օրհնութեան սուրբ Հայրապետին մերոյ ի Քրիստոս հանգուցելոյ և նորա պսակի օրհնութեանն տնդրանկի, յոյժ անագան հասին մեզ, և կսկիծ մեծ ունեցան հասարակ ժողովուրդքն ի վերայ մահուան երջանիկ հայրապետին, բայց ի յետին շունչն իւր, զյետին օրհնութիւնն իւր և զշնորհաւորութիւնն նորոգ քաղաքիս և հնգեսին գիւղօրէիցն սորին՝ զրեալ էր, հանդերձ պէս պէս խրատիւք և օրինակօք: Ընդ նմին՝ և զկիրս Հայաստան աշխարհին, որք յարշաւմանէ զօրացն Վրաց, կրեալ էին, և համարեա՝ թէ՝ մեծ մասն երկրին զերեալք:

Ի 1781, Ապրիլի 4, ի տօնի սուրբ Յարութեանն, զփայտեայ եկեղեցին Նախիջևանու, օծաք յանուն Ամենօրհնեալ սուրբ Աստուածածնին, և անուանեցաք զնա Խնդրակատար սուրբ Աստուածածին, զի նախկին եկեղեցին աշխարհի, որ կառուցաւ Յեդեսիայ, այսինքն Յուրհայ, ի Թադդէոսէ առաքելոյն, էր յանուն սուրբ Աստուածածնին:

Ի սոյն թուոջ՝ Ապրիլի 21, մատուցաք ի նմին եկեղեցւոջ պատարագ, և օծաք զչորեսին հիմնաքարսն քաղաքիս, յանուն Չորից Աւետարանչացն, և ի նմին օր՝ մեռոնթափ արարաք, և մեծափառ հանդիսիւ զդեստաւորեալք, ամենայն եկեղեցականն պատրաստութեամբ և ամենայն ժողովրդովք շրջապա-

պետք Ալէքսանդրը Ռուսմենցով Ֆրթմաշալն ի գիւղն իւր Վինշիկայ. որում եղև ուրախութիւն յոյժ. ինչոյց զմեզ ի վրանի գեղեցկագունի. զոր ի Օսմանցւոյն էր գերեալ. պահեայ զմեզ չորս օր. և յամենայն աւուր՝ առաւօտ և երեկոյ առ մեզ գայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել. և շրջեցոյց զմեզ յամենայն ուրեք՝ մեծագոյն պատուով. զգեսան մեր եպիսկոպոսական տեսեալ հաւանեցաւ. և յետ բազում մարգարէական պատուոյն, կամեցաւ առաքել զմեզ ի Քիսվ քաղաքն, յորում են բազում վանորայք և տեղիք սրբոց. որք են հիմն հաւատոյ Ռուսաց բոլոր երկրին. զի նախապէս՝ անտի են հաւատացեալ ի Քրիստոս Փրկիչն մեր. և մեք ըստ բանի նորա յանձն առաք գնալ և տեսանել զսուրբ վայրսն. գրեաց գիր յանձնարարական առ սրբազան Գաբրիել մեարապոլիտն ծերունի, առ արքիմանդրիդն Զոսիմէ, առ կամենդաթն Իվան Ստեփանիչ Կուկիսովն, ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել:

Ի սոյն թուոջ՝ ցունիսի 24. օրն հինգշաբաթի, մաք ի Քիսվ՝ ինչաք ի տուն վերոյ կամենդաթին. մերձ ի Պէչէրսկի վանքն, յորում արքիմանդրիտն Զոսիմէ նստէր. իմացեալ սոյնոյ արքիմանդրիտս, իսկոյն եկն առ մեզ ի տեսութիւն քանի մի ամբոյիւք. և զմեզ առեալ տարաւ առ ինքն ի վանքն՝ Պէչերսկի սուրբ Աստուածածնին կոչեցեալ. և շրջեցոյց յեկեղեցին և ի զգեստատունն. եկեղեցիքն էին յոյժ գեղեցիկք. բոլորն նկարեալ պատկերօք տնօրինականաց Ցեառն. ի ներքին որմէն սկսեալ մինչև ի միջակէտ կամթուղեկէին, ոսկէ տուպ խաչկալիւք և արծաթեայ սեղանօք, և սեղանն՝ զարդարեալ մեծամեծ ոսկեայ և արծաթեայ խաչիւք և պատկերօք. և ի նմին եկեղեցւոջն՝ գոյր բազում անօթ, ոսկեղէն, սկիհ քանդակագործ մարգարտեայ, և սաղաւարտ խաչիւք ականակուռ, պնակէք և խաչք պարանոցի բազում, բոլորն ոսկի և ականակուռ, շուրջառք գեղեցիկք և մարգարտաբուղեալք ակամբք պատուականօք. յետ տեսութեան զգեստուցն, տարան զմեզ ի Պէչէրսկի այսինքն ի ներքոյ դեռնի շինեցեալ երկար շէնսն, որ է ի ներքոյ վանկցն. յորում են ամենայն սուրբքն իւրեանց, և նախնի հարքն և ի Քրիստոս ծնողքն ի մէջ դակաղի եղեալք առողջ, իւրեանց հանդերձիւքն և զգեստուք. թէ եպիսկոպոս

սի մարմին բոլոր, ի միջակիտին, ի մէջ դակաղի եղեալ, և ի վերայ նորա ոսկեսուլ խորան կանգնեալ չորիւք սեամբք. զորոյ ձեռանէն խաչալուայ արարաք մեք մերով ձեռամբ և քըսեցաք յաչս մեր և ամենայն բազմութեան, որ անդ. որոյ արքիմանդրիտ էր Տարասեա, Պէչէրսկի նամէնիկի անունն էր. ի Վդուպօվսկի մանաստիրն՝ որոյ դրութիւնն է յոյժ գեղեցիկ. ի վերայ ձորոյ, արքիմանդրիտ նորին Մելքիսէդ. որ տեղապահ է մետրապօլիտին. Նիկօլսկի մանաստիրն, և կանանց երկու ա-նապատան և յայլ ուրեք : Յունիսի 30 եկաք անտի, կամէնդա-թի նուակն պատրաստի կայր, ի վերայ գետոյն մեծի. ընդ մեզ ուղևորել եկին, մեր վերակացու Եղօրի իգումէն, պլացմայեոռ Իվան Ֆեոդորիչն, և Յունաց արքեպիսկոպոս Նիկոդիմոսն՝ որ բնակէր ի Վդուպօվսկի մանաստիրն. որում շնորհեցաք արծա-թազուխ զօնար գոտի. և Սվերսկու Կիւրեղ եպիսկոպոսն, որ բնակէր ի Միխայէլսկի մանաստիրն, շնորհեաց մեզ մէկ ջուխտ սրմակար թևանոց ժամարարի, Սոփիայի քարոզչի անունն է Սամփսոն. և Պէչէրսկու դպրատան վերակացուի անունն է Ֆեոփան :

Ի սոյն թուոջ՝ Սեպտեմբեր 9, գնացեալ ի Մոսկով, օծաք անդ զկառուցեալ սուրբ Խաչ եկեղեցին, որոյ հիմն մեք էաք արկեալ՝ և անտի գնացաք ի Պետրպօլիք յաղագս տառապա-նացն Նախիջևանու, եկին և կապիտան Պարոն Յովհաննէսն և Պարոն Կարապետն դէփուդաթ. յանձնեցաք զնոսա պայծա-ռափայլ քնեալին, մեք գնացաք ի Հաշտարխան, հանդիպելով վշտակրութեանց և պէս պէս նեղութեանց ի ճանապարհին, յաղագս խառնակութեան եղանակին գարնանայնոյ, օծել և անդ կառուցեալ սուրբ Կատարինէ քարեայ եկեղեցին. և անտի դը-նացեալ ի Ղզլար և ի Մոզդոկ. և անդ օծեալ զեկեղեցիսն, դարձ-ցաք ի Նախիջևան :

Պիտի շարունակուի.

բայց մեզ է կանչում, հասնինք Աղասի։ Աստուած է մեզ ու-զարկողը։ Թագուհու համար ենք այս քան նեղութիւն յանձն առել։ տանից տեղից աքսորուել։

ԱՂԱՍԻ։

Ուրեմն այժմ Թագուհին Ղաբս է։ Քրդերի ձեռքն։ . . խեղճ Թագուհի։ . . . Իմ բարեսիրտ հօրեղբայրս։ վախում էիր։ որ քո Աղասին աւելի վշտանայ։ էն պատճառաւ չէիր ասում։ Բայց Մուսա։ լաւ նայիր քո Աղասուն։ քանի բերանումը շունչ կայ։ քանի բազկումը զօրութիւն։ պէտք է վրէժ առնի իր ազգի թշնամիներից։ դու ի՞նչ ես կարծում։ Աղասին կը համբերի՞ մինչև Քրդերից մի քանիսին էլ Սարդարի զօրաց հետ չուղարկի Մահմեդի գժոխքը։ ես Ղարսումն էլ պէտք է ցոյց տամ, թէ Հայոց մէջ ես կայ հոգի իւրենց անունը պահպանելու։ Հայերը ճանճ ու մժեղ չեն։ ինչպէս մինչև հիմա ուրիշները կարծել են։ Հայերը խոտակեր չեն։ կը գայ օր։ որ Հայոց թափած արեան փոշիցը կըբուսնին նախանի քաջերին հետևողք։ և ցոյց ունիմ։ որ մենք այն իսկ շառաւիղներն ենք։

ՄՈՒՍԱ։

Ուրեմն շուտով կերթանք Ղարս և իմ հրաշագեղ Թագուհուն երկրորդ անգամ էլ կազատենք գիշատիչ գազանից։ Թագուհին։ ախ։ այն անմեղ կոյսն էր։ որ մեզ այս տեղը ձգեց։

ԱՂԱՍԻ տեսարանի խորքը նայելով.

Ահա գալիս են մեր քաջ ընկերքը։ շուտով կերթանք և դեռ կէս գիշեր չեղած՝ Ղարս կը մտնենք։

ՏԵՍԱՐԱՆ Է։

ՆՈՅՆՔ և ՎԱԹՕ։ ԿԱՐՕ և ՎԱՆԻ։

ՎԱՆԻ։

Աղասի։ ահա երեք եղջերու սպանել տարել ենք այրը ձիանց մօտ։ գնանք։ վերցնենք և յետ դառնանք փամբակ։ արդէն ժամանակ է։

ՎԱԹՕ։

Այրի կարօն։ ինչպէս ուղղակի կուրծքի՝ տակիցը անցկացրին իր գնտակը։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Անի քաղաքի մէջ մի աւերակ, այս եւ այն տեղ քարեր են թափած։ Աւերակի մէջ տեղը կրակ է վառուում, մի քանի Քուրդ նստած կրակի շրջակայքը, շամփուրները ձեռներին խորոված են անում եւ ուտում, երբեմն երեսները դարձնելով դէպի տեսարանի խորքը, մատով ցոյց են տալիս, որ ձայն չհանեն, երբեմն իրար հետ անխօս ծիծաղում են։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Աղասին ներս է մտնում լուռ ու մունջ, դնում է դէպի Քրդերը, մէջ տեղը կանգնում, երբեմն խոժոռ դէմքով նայում է Քրդերին, երբեմն միւս կողմերը, առնում խորոված մէկ շամփուրը կրակի վրայից, մի երկու կտոր ուտում, մնացեալը կրկին կրակի վրայ ձգում։ Քրդերը մնացել են սարսափած, կարծելով թէ դեւ է։ Դրսից լսուում է մի ձայն։

ՄՈՒՍԱ դրսից.

Աղասի, ո՞ր տեղ ես։

ԱՂԱՍԻ գոռալով.

Քաջացէ՛ք տղայք, Քրդեր են, առաջները կտրեցէ՛ք։

ՔՐԴԵՐԸ չփոթուած.

Աղասին է, Աղասին։

ԱՂԱՍԻ ներսից.

Մուսա, մի՛ թողուք։ Կամելով դուրս գնալ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՄՈՒԹԸ ԽՈՐՔԻՑԸ յանկարծ մի քանի ձայն.

Ի սէր Աստուծոյ, դրանց մի՛ թողուք փախչին, մեզ ազատեցէ՛ք, մենք Հայ Քրիստոնեայ ենք։

ութիւնը պահպանել, բաւական չեն այն ծանր հարկերը, որ մենք տալիս ենք, այս անօրէն Քրդերն էլ մեզ հանգիստ չեն տալիս, ամէն ժամանակ քաշում են մեր երեխայքը, ընտանիքը և շատ անգամ ամբողջ գիւղը, տանում Պարսից հոյը կամ Երևանայ Սարդարին ընծայում. ախ, արդեօք Աստուած մեր Հայերին մէկ դուռը կը բանա՞յ, մինչև ե՞րբ օտարի ձեռքի տակ պէտք է ճնչուինք ու տանջուինք :

ԱՂԱՍԻ.

Ո՛վ Աստուած, ես այնպէս գիտեմ, թէ միայն մեր երկիրը անօրէն Պարսկայ խաղալիք է դարձած, այնպէս գիտեմ, թէ միայն մենք ենք անտէր ու անօգնական, մի՞թէ ամէնտեղ Հայ ազգը գերի է և օտարաց սրին կերակուր. Տէր Արարիչ, ի՞նչ է մեր մեղքը, որ այսքան տարի չկարողացանք տպաշխարել :

ՄՈՒՍԱ.

Երևի, մեր ճակատագիրը էսպէս է գրուած, մեր մխիթարութիւնը էս աշխարհքումը չը պէտք է լինի :

ԱՂԱՍԻ Քրիստոնեայ Հայերին.

Էս ի՞նչ տեղ ենք մենք, եղբա՛ր, էս տեղ մեր առաջին գալն է, մանաւանդ գիշեր է և ոչինչ չենք տեսնում մենք. Դարս պէտք էր գնայինք և չգիտենք ո՞ր կողմն ենք գնացել :

ԱՌԱՔԵԼ.

Էս է Անի քաղաքը, մենք հիմա նորա մի աւերակի մէջ ենք, էս քաղաքը սուրբ Յոհան Երզնկացու անէծքով կործանուեցաւ, հիմա միայն աւերակներն են մնացել և Քրդերի ու աւազակաց բնակարան է դարձել, ճշմարիտ որ անիծած քաղաք, Քրդերը որ մեր տունը յափշտակում են, այս քաղաքի մէջ են թախ կենում :

ԱՂԱՍԻ.

Այս Անի քաղաքն է, Հայոց թագաւորանիստ քաղաքը, ախ, երբեմն էս տեղ Հայոց քաջ թագաւորներ են բնակուել հիմա Քրդերի և աւազակների բնակարան է դարձել. էս էլ մի տարաբաղդութիւն Հայոց համար. խեղճ իմ ազգ, այնքա՞ն մեղաւոր ես, որ քո թշնամիքդ քո բուն քաղաքումն իրենց

ԱՂԱՍԻ.

Ի՞նչ էք կարծում, այս գիշեր կարո՞ղ ենք այս տեղ հանգիստ մնալ, ոչինչ տեղից երկիւղ չի՞ լինիլ։

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ.

Տէր, քո գլխին մատաղ, մենք չգիտենք, թէ էս անօրէնները էլ կան, թէ ո՛չ, բայց զգուշութիւն է հարկաւոր, սրանց ձեռքից ոչ ոք չի ազատուիլ, փառք Աստուծոյ, հիմա սրանց նման հազար գազան մեր վերայ յարձակին, ոչինչ չեն կարող առնել, մի սուր միայն լինի մեր ձեռքին, մենք գիտենք, թէ ի՞նչպէս վրէժ կառնենք սրանցից, դու միամիտ կաց, մենք զգոյշ ենք։

ԱՂԱՍԻ.

Մի՞շտ պէտք է զգոյշ լինէք, որ այս տեղը չընկնիք, հիմի զգոյշ լինիլը հէրիք չէ. մի՞թէ դուք կարծում էք, թէ գրդերը ձեզանից քաջ են. դուք էլ սուր ունիք, դուք էլ ձեռք բարձրացրէ՛ք, տեսէ՛ք, թէ ի՞նչպէս նրանք իրենցը պահում են, 'ի հարկ է եթէ դու յօժարութեամբ և երկչոտութեամբ անձնատուր լինիս բռնաւորին, նա ոչ միայն քո կայքդ կը յափշտակէ, այլև քեզ կսպանէ։

ԵՐԿՈՒ ԳԱՋ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.

Ո՛վ տէր, ինչի՞ ես թողում հապա այս գրդին կենդանի, մեզ հրամայիր սրան էլ սպանենք, մեր սիրտը հովանայ, սա գլխաւորներից մէկն է։

ԱՂԱՍԻ.

Չէ, եղբա՛րք, սանձեցէ՛ք բարկութիւններդ, թողէ՛ք սրան կենդանի մնայ, դեռ սրա գլխին շատ բան պէտք է գայ։

ՄԻ ՀԱՑ.

Ի՞նչպէս հրամայում, տէր, թո՛ղ, թո՛ղ սրանից մեր վրէժն առնենք, սրանք մեր տները քանդեցին, մեր երեխայքը սուրը քաշելով վերջացրին, թո՛ղ սրան էլ միւսների հացին ուտցընենք. սրանք գրդ են, սրանք Հայի արեանը ծարաւ են, երբ և իցէ մեզանից կը հանեն այս վրէժը.

Աստուծոյ, որ դայ էս անիրաւ Քրդերի յարձակմունքից մեզ ազատէ և ճշմարիտ որ ապատեց ։

ՄԻ ՀԱՑ։

Ի՞նչ շքեղ կերպարանք, ի՞նչ հսկայական դէմք, մեր Ղարսայ փաշէն եթէ դրան տեսնի, շատ կը սիրի, նա սաստիկ ցանկանում է տեսնելը, շատ անդամ մեր իշխանների մօտ գովել է դրան ։

ՎԱՆԻ։

Աղասու քաջութիւնն և քաղցր բնաւորութիւնն է, որ տարի ու կէս է մեզ իրեն հետ պահում է, եթէ նա չը լինէր, մենք վաղուց գլխներս կորցրել էինք, քանի՞ անդամ ազատել ենք խեղճ ճանապարհորդներին աւազակների ձեռքից բոլոր մեր սիրելի Աղասու շնորհքով ։ (Դրսից ձայներ է լսւում «փառք Աստուծոյ»։

ԿԱՐՈ։

Ականջ դրէ՛ք, ահա ձայն է գալիս, կարծեմ նրանք լինին, ի՞նչպէս շուտ վերադարձան, Աստուած տար՝ ճշմարիտ լիներ ։

ՏԵՍԱՐԱՆ Ե։

ԱՂԱՍԻ, ՄՈՒՍԱ, ԹԱԳՈՒՀԻ և միւս երիտասարդները։

ԱՂԱՍԻ Թագուհու կուռը բռնած։

Փառք տուէք Աստուծոյ, իմ քաջ ընկերք, մեր այս տեղ գալը առանց Աստուծոյ կամքի չէր։ մենք եթէ Ղարս դնայինք, այս բոլոր ժողովուրդը և այս անմեղ աղջիկը պէտք է գաղանաց ճանկն ընկնէին ։

ՄՈՒՍԱ նայելով Թագուհու երեսին։

Ո՛վ Աստուած, ի՞նչ եմ տեսնում, Թագուհին, իմ աննման Թագուհին, ո՞վ իմ կենաց մէջ ամենից քաղցր օր ։ ։ ։ ։ ։

ԱՂԱՍԻ։

Փառք քեզ Աստուած, Թագուհի՞ն։ ։ ։ ով անհաս անօրէնութեանդ Արարիչ ։

Նազլուն էլ շուտով կը գայ, ի միասին կապրին ուրախութեամբ և մենք էլ երջանիկ կանենք Թագուհու և Մուսայի կեանքը։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Աղասու ոտքերն ընկնելով.

Ո՛վ ազատիչ մեր, դու մեր փրկողն եղար, մեզ մեր երկիրը հասցրու, ապա դնա։

ԱՂԱՍԻ.

Իմ եղբարք, խեղճ անտէր Հայոց ազգ, ամէնքս էլ Աստուծոյ ծառայքն ենք, Աստուած է մեզ այս տեղ ուղարկելու մի՛ վախիք, ես ձեզ չեմ թողուլ, ձեզանից մեծ խնդիր ունիմ, որ յուսամ կատարէ՛ք, բայց դեռ սպասենք։ Ես լսել եմ, որ Անի քաղաքը հինգ հարիւր տարի է քանդուել է. մինչև այսօր մեր եկեղեցիքը բացի անհաւատ Քրդերից և աւազակներից ոչինչ չեն լսել և տեսել, եկէ՛ք ծունկ չոքենք, փառաբանենք Աստծոյն, այսօր սկսաւ Հայոց փրկութեան և վերակենդանութեան սկիզբը, այսուհետև յուսամ, որ Հայը հնարք կը գտնի իրեն փրկութեանը։

Ամէնքը ծունկ են չոքում, Աղասին իր ընկերներովը երգում է իրենց սովորական աղօթքը։

Խեղճերի Աստուած, դթած ողորմած,
Նայի՛ր երկնքից անտէր Հայ ազգին,
Ամէն կողմանէ նա յոյսը կտրած՝
Քեզ է սպասում, հասցնես իր փառքին։
Տուն ունի խլած՝ երկիրն այլք ուտեն,
Իր հայրական տանն ինքն է բանտարկուած,
Մեծ մասն էլ ցրուած՝ այլ երկրում կորչին,
Կամ օտար ծխից լինին ենթարկուած։
Օսմանցին ու Քուրդ Պարսիկ, Վրացին,
Ցոյնք, Հագարացիք և այլ շատ ազգեր
Հայոց աշխարհը իրարից խլեցին,
Հայն արտաքսեցին, իրենք եղեն տէր։
Մի՞թէ վերջ չկայ այս աղէտքներին,
Որ անօրէններն մեզ են պատճառում,
Դու Տէ՛ր, տէր դարձիր անտէր Հայ ազգին,
Ժողովո՛ր կրկին Հայքն իրենց երկրում։

պերից լսել ենք, որ եթէ մի Հայ երեք օր Անի քաղաքի մէջ մնայ, էլ էնտեղից կենդանի չի դուրս գալ։

ՄԻ ՈՒՐԻՇ ՀԱՅ.

Դեռ անծանօթ չէ այս տեղի գետնափոր ճանապարհին. աներևոյթ ղևերը այն տեղ բնակուած են և մէջը մտնողին խեղդումեն։

ԱՌԱՔԵԼ.

Ես ինքս լսել եմ, որ մեր գիւղերից մի մարդ այս աւերակ քաղաքը մտնելով, կընկնի գետնափոր ճանապարհը, տասը տարի մոլորեալ կը որոնի, ճանապարհ չի գտնիլ դուրս գալու, ապա մի հնարքով դուրս կը գայ, բայց դա առաջինն է, որ դուրս է եկել։

ԱՂԱՍԻ.

Խելքներդ գլուխներդ ժողովեցէք, եղբարք, տասն օր մարդ քաղցած չի մնալ, ի՞նչ էք ասում. հանեցէք ձեր գլխից էդ սխալ կարծիքը. Անին, ճշմարիտ է, քանդուել է, բայց ոչ թէ Յօհան Երզնկացու անէծքով, այլ երկրաշարժութեամբ. եկէք մնանք էստեղ, մեզանից թող սկսի Անի քաղաքի վերականգնումը։ Ես կերթամ Դիւմրի, էնտեղից հրաման կառնեմ, քըրիստոնէի իշխանութեան տակ կը մտնենք, կամաց կամաց մեր կորած մոլորած, անհաւատների բռնութիւնից նեղացած եղբարքն էլ կը դան մեզ հետ կը միանան, լաւ ամուր տեղ ենք, մեզ ոչ ոք չի կարող յաղթել։

ՄԻ ՀԱՅ.

Մշու սուրբ Կարապետը թող քեզ օգնական լինի, ինչ որ կամիս արա, բայց մենք չենք մնալ, ահա քո սուրը և մեր պարանոցը, կամիս կարիր։

ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԸ.

Մեզ սպանիր և մի՛ պահիր էս տեղ, մենք մեր երկիրը չենք թողուլ։

ՊԵՏՐՈՍ մի Բրոտեստանցի.

Ի՞նչ էք ասում. եթէ իմանամ, թէ Անի քաղաքի մէջ մընալով պէտք է խոցոն մեռանիմ, նոյնպէս կը մնամ։ Ես օրա մօտ.

առասպելներ են, ով է կարողուրանալ Անի քաղաքի աստուածպաշտութիւնը. դուք ինձանից լաւ գիտէք, այս տեղի հաղար և մէկ եկեղեցիքը կենդանի վկայք են Անուոյ մէջ եղած ջերմեռանդութեանը. ես լսել եմ, որ մի հովիւ զատկի օրը եկեղեցումը իր կնկանը տեղ չը լինելու համար մի հոյակապ եկեղեցի է շինել, ո՞ր աշխարհումն է լսուած այս բանը: Ա՛խ, էդ քո կիսաւեր ամրոցներիդ մեռնիմ ով Անի, քո ամէն մի քարը նուիրական և սուրբ է, քո ամէն մի աւերակդ ցոյց են տալի Հայոց ճարտարապետութիւնը և հարստութիւնը, իսկ այդ կիսակործան պալատներդ, քո թագաւորաց շքեղ փառքն ու գայսոնը, ո՞հ, ո՞ւր են ո՞ւր, հիմա այդ ամէնը. աւա՜ղ, հիմա աւերակ և անտէր են մնացել գազանաց և բուոց որջ ու բուն են դարձել: Հայ քրիստոնեայք, ի սէր Աստուծոյ, երեսս տրորեցէ՛ք, մնացէ՛ք այս սուրբ քաղաքումը, դոնէ այս աւերակները ձեզ ի դուք շարժեն:

ՂԱԶԱՐ մի ուրիշ Քրիստոնցի.

Ի՞նչ ես հրամայում, եթէ մնանք էլ, եթէ չքանդուի էլ, կրկին այսքան Քրդերի մէջ մենք ոչինչ չենք կարող՝ի դլուխ տանել, Հայերի սրտին այնքան քաջութեան նշոյլ մնացե՞լ է, որ պահպանեն այսպէս մի աւերակ դողդարան քաղաք:

ԱՂԱՍԻ.

Լսի՛ր, ով մարդ, դու դեռ չես փորձել ամէն մի Հայի ոյժը, սրտաբեկ, յաղթուած և յուսահատեալ ազգին դժուար է ընդդիմանալը. ի՞նչն էր ձեզ զօրացնողը, որ ամէնքդ մի մի առիւծ էիք դարձել Քրդերին կոտորելուս. այդ ձեր վերջին ասուածան յուսահատութիւնն էր: Հայոց ազգը բաւական նեղութիւն կրեց, չարչարուեց, տանջուեց, Հայոց ազգը տեսաւ իր որդւոցը իրեն աչաց առաջ կտոր կտոր անելը, հալածանք չը մնաց, որ չկրեց, չորս անգամ տէրութիւն կորցրեց, այժմ էլ այնպէս չի անել: Եթէ մէկը կը յանդգնի նրան դիպչել և նորա բռնութեան շղթայն արձակ կը լինի, նա ամէնքից կառնի իր այնքան նեղութեանց վրէժը: Քրդերը Անիումը մեզ ոչինչ չեն կարող առնել, դուք ինքներդ ասացիք, թէ ամէն մէկդ տասը Քուրդ ձեր սրին կը զոհէք. ես գիտեմ որ շատ իրաւ է այդ.

ՏԵՍԱՐԱՆ Ե·

ՍՂԱՍԻ միայն սկսումէ դննել տեսարանը, չորս կողմն է նայում եւ յետոյ նստում մի քարի վերայ այսպէս ասում,

Հայրենիք, հայրենիք, քո հողին մատաղ,
Քո ծխին մատաղ, քո ջրին մատաղ,
Ես փառքն ունէիր, ես պատիւն առաջ,
Որ հիմի աւերուել՝ մնացել ես անշէն։

Ո՞ւր ձեր տէրերը, թագաւորները,
Ձեր պահողները, ձեր իշխանները,
Ինչի՞ մեզ թողին իրանց որբերին
Ու ձեռք վերցրին թողին էս քարերը։

Հող ունինք խլած, կեանք ունինք մեռած,
Ա՜խ, ջրի, կրակի մենք դերի դառած,
Ոչ երկինքն է տեսնում մեր սուրն ու լացն
Ոչ երկիրն է պատռուում ու մեզ տանում ցած։

Ի՞նչ կըլի մէկել գլուխ բարձրացնէք,
Ձեր աղգին տեսնէք, նրանց ցաւը քաշէք,
Ձեր արիւնախառն աշխարհն աղատէք,
Կամ մեզ էլ ձեզ հետ հողը տանէք, պահէք։

Ա՜խ, մեր սիրտն էսպէս ընչի՞ հովացել,
Արիւնը ցամաքել, մեր կուռը թուլացել·
Արդեօք կը տեսնի՞մ, ա՜խ, ես մէկ օր էլ
Մեր սուրբ երկիրը թշնամուց աղատել։

Կանգնել ես էդպէս գլուխդ ամպին խփած,
Ա՞յ խեղճ ալեւոր, երեսըդ փակած,
Ի՞նչ կըլէր, Մասիս, ա՜խ, դեռ աչքդ բաց,
Սրի չլ տայիր քո որդիքն էրուած։

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է մի լեռան, մկա կողմն երևում է մի աւերակ գիւղ, դրսից լսուումեն հեկեկանքներ եւ հառաչանքներ, դաշտումը թափած են մի քանի քարեր։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀԱՍԱՆ ԽԱՆ *շտապով սարի վրայից իջնելով։*

Ափսոս իմ ձին, ափսոս իմ ձին, մի աշխարհքի հետ չէի փոխիլ։ Էս ի՞նչ պատահեցաւ, փոքր էր մնացել անպիտան Հայոց արմատը կտրէի, Խղջարաքիլիսէն արդէն ձեռայ դնաց, բայց էլի անյաջողութիւն, որ տեղից էս անհաւատ Ռուսաց զօրքը դուրս եկաւ։ արդեօք իմ զօրքը յաղթուեցաւ, մի՞ թէ ձիուս չէին սպանել, եւ գիտէի։ ապա էն Քրդերը, նրանք որ տեղից դուրս թափուեցան, նրանք էլ ուրիշ պատիժ ինձ համար։ նրանք Օսմանցուի մարդիկ են, Ռուսաց զօրքի հետ ի՞նչ բան ունէին, ի զուր ես նրանց տեսնելով փախայ, դուցէ ինձ օգնութիւն էին եկել, իսկ եթէ չփախչէի, ի՞նչ պէտք է անէի, կարող էի նրանց յաղթել, եթէ թշնամիք լինէին։ ։ ։ ։ ։ Գոնեա այս տեղ մի լաւ տեղ գտնեմ, զէնքս պատրաստեմ, որ զիտէ էսպիսի ժամանակները վատանդն անպակաս է։

Նայում է շրջակայքը, բարձրանում սարը եւ թմբի տակին նստում։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՂԱՍԻ *սարի վրայիցն իջնելով.*

Խա՛ն, արենկեր գաղան, ո՞ւմ ձեռքից փախար։

Հասան խանը չկլուած՝ ներքեւ է փախչում։

ԱՂԱՍԻ.

Էս տեղ Մահմատ ու Ալի չկան, երեսդ արևելք դարձրու, խաչակնքիր, դու մեր Հայերին շատ ես քո Մահմետի կողմը դարձրել, չոքիր Հասան խան, չոքիր ու երեսդ խաչակնքիր, քեզ քրիստոնեայ պէտք է շինեմ։

ՀԱՍԱՆ ԽԱՆ կատաղած.

Անպիտան Հայ, դու՞ մնացիր Հասան խանի վերայ ոտք բարձրացնես, դու՞ մնացիր ձեր անարդ հաւատի պատուիրանքները ղլխես թափես, հող տուր ղլխիդ, Հասան խան, էս ի՞նչ ես լսում էն էլ ո՞ւմից, մի չնչին Հայից. Քուրդ, Օսմանցի տար ինձ էս թուք ու մուրը, թուելի չէր, բայց մի անմաքուր Հայ է էդ անողը. ա՛խ, ես ինչի՞ պէտք է Հայի սերունդ թողայի աշխարհիս վերայ։

Ուզում է դնալ ղէնք վերցնել, բայց Աղասին բռնում է։

ԱՂԱՍԻ.

Ո՞ւմ հետ ես խաղում, խան, ես քեզ ցոյց կը տամ ղէնք վերցնելն ի՞նչ է նշանակում։ (Ասում է ու ձեռքը Հասան խանի պարանոցին ձգելով էնպէս տանում բերում, որ նա խոկոն վէր է ընկնում։

ՀԱՍԱՆ ԽԱՆ վէր ընկած.

Ի՞նչ անեմ, հիմա իշխանութիւնը քո ձեռքին է, լեզու չունիմ խօսելոյ. Հասան խան, Հասան խան, ո՞ր տեղն ես ընկել։

ԱՂԱՍԻ.

Ահա՛ քեզ ղէնք վերցնելը (ուզում է սուրը հանել եւ խփել, բայց կէսը հանելուց յետոյ տեղն է դնում եւ ասում.) բայց չէ, Հայի ձեռքի դու չես արժան, ոտքը համբուրիր, քեզ եմ ասում, Հասան խան, մինչև երեսիդ չխաչակնքես, չես ազատուիլ. ի՞նչ ես մոռացում էս օր ես քո լուսաւորիչը պէտք է դառնամ, լաւնայիր, ինձ ճանաչո՞ւմ ես, հազաց Քրդի շոր է, բայց ինքս Հայ եմ։ Քանի՞ քանի անգամ Սարդարին հրապուրել ես, որ ինձ թուրքացնէ, ես Աղասին եմ, Աղասին, Հայոց սարվաղների նայիբը, Քանաքեռցի Աղասին, ի՞նչ, իմ հօրը բանտի մէջ կը սպանես, չէիր իմանում, որ մէկ օր ձեռքս կընդնիս. դու չը-

ԿԱՐՕ սուրը հանելով.

Թողէ՛ք, թողէ՛ք, իմ սուրը դրա սիրտը կոխեմ, հերիք է, ինչքան դա մեր արիւնը ծծեց:

ՎԱՆԻ սուրը հանելով.

Տէ՛ս անօրինին, ինչպէս աչքերը վրէս տնկել է, ինչ ենք նայում, խփե՛նք, արիւնը թափե՛նք:

ՄՈՒՍԱ.

Աղասի, էլ ինչ ես նայում, դու ես բռնել, դու պէտք է դրա գլուխը կտրես, դու ես միայն արժանի այդ մեծագործութեան և քաջութեան անունը քո վերայ կրելու. ապա թէ ոչ, ես վաղուց դրան վերջացրած կը լինէի, որն անվախչելի է, ջախջախիր դրա գլուխը, դա թունաւոր օձ է, քանի շուտ սպանես, օգուտ է:

ԿԱՐՕ.

Քար ձգիր գլխին, դրա արիւնը մեր վզին:

ԱՂԱՍԻ.

Ո՛վ ինձ սիրում է, սուրը պահէ, էսպէս ամայի տեղը մէկ ուլ սպանելը մեծ բան չէ, թողէ՛ք, դեռ սրան հաւատի բերենք:

ՄՈՒՍԱ.

Ի՞նչ հաւատ, ինչ ես ասում. կատաղած գայլին ինչ աւետարան, մի՞թէ մեր ազգի տունը աւերողին մի բոլէ ես կեանք պէտք է տուած, շունչ պէտք է թողած բերանումը, սպանի՛ր, Աղասի, ապա թէ ոչ քեզ էլ դրա հետ կըսպանենք:

ԱՂԱՍԻ.

Ինձ սպանեցէ՛ք, իմ սիրելի ընկերք, միայն թէ թողէ՛ք սրա մահը մի քանի մարդիկ ես տեսնին, որ սրտները հովանայ: (Հասան խանին) տեսնո՞ւմես, Հասան խա՛ն, լաւ նայիր այս քաջ երիտասարդներին, քո զօրքը սոցա զօրութիւնը շատ է տեսել, հազար անգամ Մաստարայի կամ Ղօշավանքի կողմերը քո զօրքը հինգ հարիւր հոգւով մեզ վերայ յարձակուել են, բայց քառասուն, յիսուն հոգի կորցրած՝ յետ են

զօրքերը, ապա այն ժամանակը գայլ կը դառնայ, խփիր, դրա արիւնը ժանտ է։

ԱՂԱՍԻ.

Լսիր, Հասան խան, ընկերներս քեզ կենդանի չեն թողուլ՝ միայն ես կամք չեմ տալի, նրա համար, որ քո բերանովդ երդուիս Հայոց ազգին օգնելու և Խլղարաքիլիսէն ազատելու. ինչ ես վճռում, յանձն ես առնում եթէ ոչ, ես վայրկենումս ձերդ ու թոքդ դուրս կարեցի։

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Աղասի, Մահմետի, Ալու անունովը երդուումեմ, որ այսուհետև իմ ընթացքս փոխեմ, Հայերին ամէն ազգից շատ սիրեմ, Երևան հասած բոլորին քո ծնողացը և բոլոր Գանաքեռի կալանաւորներին ազատեմ, այս ժամուս մէջ գնամ Խլղարաքիլիսէցը զօրքս յետ դարձնեմ, միայն թէ դու ինձ ազատութիւն տաս։ Եթէ ասածներս չիատարեմ, եթէ երդմանս հաստատ չմնամ, իմացիր, որ աշխարհումս ինձ նման անարդ մարդ չը կայ, թող իմ անունը Հասան խան չը լինի, թող Մահմետի գողը չերթամ, ահա իմ հաւատս էլ քեզ վերադիր։

ԱՂԱՍԻ.

Եթէ այդպէս է, ես քեզ շուտով կազատեմ, եթէ երդումդ ես հաստատ չպահես, հոգ չէ, էտով քո անպիտանութիւնը ցոյց կը տաս աշխարհին, թէև առանց էդ էլ գիտեն բոլորը. միայն մի փոքր էլ սպասիր, մինչև քո թուրքերը դան և տեսնեն իրենց տիրոջը իմ ոտքի տակին։

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Խնդրումեմ, դեռ իմ մարդիկը չեկած՝ ազատիր, ամօթ է ինձ համար, եթէ նրանք ինձ այսպէս տեսնին, Հասան խանը առաջին անգամն է այս տեղն է ընկնում, մինչև այսօր նրանք բացի իմ քաջագործութիւնից՝ ուրիշ ոչինչ չեն տեսել։

ԱՂԱՍԻ.

Չէ, չէ, դեռ համբերիր, քո բերանովդ պէտք է նրանց պատուիրես, որ գնան Խլղարաքիլիսից զօրքը յետ դարձնեն։

Դրսից լսուում է ոռնաձայն և աղաղակ։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Մի քանի թուրք ներս են գալի եւ անսարանի խորքումը կանգնում, զարմացմամբ նայում։

ԱՂԱՍԻ Բրդերին.

Գլուխներդ ոտքիս տակին է, թուրքե՛ր, հինգ ժամէ, ձեր հոգին իմ ձեռքին է, ահա՛ Հասան խանը, որ լեռներ ու գաշտեր էր գողացնում։ արա՛ն նայեցէ՛ք, ձեր սեւ օրը լացէ՛ք։ (Հասան խանին) խան, հրամայիր, որ գնան Խլըարաքիլիսէն առատեն, էն ժամանակ քո կեանքն էլ կը լինի աղատ։ ապա թէ ոչ բագիս գրուութիւնը տեսար։

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Տղայք, գնացէ՛ք գրքը յետ դարձրէ՛ք, ես էլ հիմա գալիս եմ։

Թուրքերը դուրս են գնում։

ԱՂԱՍԻ Հասան խանի ձեռքերի կապն արձակելով։

Հիմա դու էլ կարող ես գնալ, բայց չկարծես, թէ կերթաս եւ կը կռուես, ես իմ քաջ ընկերներովը առաջդ կառնեմ։ իմացիր, Հասան խան, Երեւանայ բեկդու�եւս լինիս քեզ կենդանի չմ թողուլ եթէ երդմնազանց դանուելով մի Հայի անպատիւ դիպչիս։ վեր կաց եւ գնա։

Հասան խանը լուռ ու մունջ վեր է կենում, վախենալով դուրս գնում։

ԱՂԱՍԻ ընկերներին.

Հիմա գնանք, սիրելիք։ Աստուած մեր կողմն է։ Հայոց փրկութեան օրերը մօտացել են, գնանք, խառնուինք Ռուսաց զօրաց հետ, շուտով ես գիտեմ կերթանք Երեւան առնելու, շուտով արժանի կը լինինք մեր ընտանեաց տեսութեանը։ Ա՛խ, հայրենիք, ա՛խ ծնողք, ա՛խ Նազլու, արդեօք մի՞ւս անգամ ձեր երեսը կը տեսնե՞մ։

դուրս են գնում.

վարագույրը իջնում է։

Պիսի չարուեանի։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԵՒ

ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գ.

ԲԱՑ Ի այն յոյն Աղբիւրներից որ վերաբերում աչքի անցուրինք, Մովսէս Խորենացին ուրիշ ամենահարուստ պատմական գանձից էլ օգուտ է քաղել մի գանձ, որին արդիւնքները անդին են գիտութեան համար. մեր խօսքը այն Արամեան գրականութեան աղբիւրների վրայ է, որ հեթանոսութեան ժամանակներում ասուում էր քաղդէական կամ Նաբատեան գրականութիւն, իսկ քրիստոնէութեան դարերում ասորի գրականութեան անունը ստացաւ :

Այժմեան գիտնականների համեմատական լեզուագիտութեան օգնութիւնով տրած նոր գիւտերը հաստատում են մեր կարծիքը, այսինքն թէ՝ Պերոզի, Սանքոնիաթոնի, Կուրթամի և ուրիշ մատենագիրների անունով մեր ձեռքը հասած գրքերը, որոնց հատուածները յիսադայ դարերի գրուածներում ցրուած են, նախնի Արամեան գրականութիւնների են պատկանում՝ Քաղդէացոց երկրում և Փինիկէում : Պ. Պ. Կատրմէր, Թվօլսոն, Կիւնիկ, Լարսով և Ռենան շատ լաւ են հաստատել, որ այս գրականութիւնը քրիստոնէական թուականից առաջ քաղդէական երկրում կազմուած մատուրական զարգացումն է, որի պատուղները ըստ մեծի մասին անհետացել են : Բացի սրանից Պ. Էրնեստ Ռենանը շատ յաջողակ կերպով ցոյց տուեց թէ Նաբատեան լեզուն փոխուելով՝ ներանից յառաջացաւ Ասորոց բարբառը, և թէ այս զարգացումը որի գլխաւոր կենտրոնը Եդեսիա ու Մծբին էր, Նաբատեան լեզուի շարունակութիւնն է քրիստոնէութեան ժամանակ :

Բայց թէ ինչպէս կը լինի որ այս երկու գրականութիւնների, այսինքն քաղդէականին և ասորականին մէջ դարեւոր ժամանակներ են անցկացել և թէ ինչպէս բանաւորները մինչև հիմայ մէջն դրուութեան հետքերը չեն դտել որ պէտք է ծաղ-

կած լիներ Պերոզից յետոյ, որ Քաղդէացոց երկրի արտաքին ու հեթանոս գրականութեան գլխաւոր ներկայացուցիչն է, և Բարդածանից առաջ, որ Եղեսիայի ասորական դպրոցի առաջին քրիստոնեայ մատենագիրն է, — այդ շատ անհասկանալի բան է: Քննադատական գիտութիւնը չէ կարող ընդունել որ այլ և այլ դարերի ընթացքումը ոչ մի մտաւորական շարժողութիւն եղած չլինի Քաղդէացոց երկրումն ու Միջագետքումը, և խորին լռութիւն տիրապետած լինի այն ժողովրդների վրայ, որոնց նախնիքը այնպիսի ընդարձակաձաւալ խելք են ցոյց տուել որի նմանը քիչ ենք տեսնում Սեմեան ցեղի ուրիշ ժողովուրդների մէջ: Սեմեան ժողովրդներից Քաղդէացոց մէջ երևումէ մանաւանդ այն յատկութիւնը, որ Արեան ցեղին սեպհական է. այսինքն այնպիսի դպրութիւնների հեռաւիլ, որ զգալի կերպով հեռանումեն կրօնական գաղափարից: Եւ ահա այս է գլխաւոր պատճառը որով բոլոր Սեմեան գրականութիւնները ածել ու զարգացել են:

Ինչպէս էլ լինի, վերևը յիշած արտաքին ու հեթանոս գրականութեան միջումը, որ յանկարծ մարեցաւ, և քրիստոնէական գրականութեան մէջ, որ նոյնպէս յանկարծ երևան եկաւ, հարկ է որ մի միութեան կապ լինի, որով կարողանանք ոչ միայն մտքով ըմբռնել այլ կատարելապէս հասկանալ այն շարժողութիւնը, որ այս երկու գրականութիւնները մէկմէկից բաժանող միջին ժամանակումը տեղիք ունեցաւ:

Փոքր ինչ յետոյ կը ջանանք ցոյց տալ որ Հայոց մատենագիրների՝ այս անխոնջ թարգմանիչների գրքերումը, որ Յունաց և Ասորոց հեթանոս ու քրիստոնեայ ժամանակների գրուածները հայերէն փոխել են, Հայ մատենագիրների գրուածներումը երևումէ այն միութեան կապը, որ այս երկու գրականութիւնները, այսինքն քաղդէական կամ Նաբագեան և ասորի գրականութիւնները մէկմէկու հետ կապումէ:

Ասացինք թէ Մովսէս Խորենացին գլխաւորապէս յունական տրքիւներից է օգուտ քաղել, տեսանք դարձեալ թէ քաղդէական գրքերի յունական թարգմանութիւնները նախապատիւ համարելով նրանցից խորհուրդ է հարցրել. գիտենք նոյնպէս որ Խորենացու ժամանակ այս թարգմանութիւնները բաղ-

մաթիւ էին, որոնց պատճառով այժմ մի քանի հատուածներ ճանաչումենք այն Արամեան ընդարձակ գրականութիւնից, որ հին ժամանակներումը այնքան ճոխացել ու զարդացել էր, ինչպէս որ տեսնումենք մեր ձեռքը հասած հատուկոտոր գրուածներից, որոնք գրեթէ անհասկանալի են մեզ և այս օրուան օրը քննադատները չեն միաբանում ասել թէ արդեօք այս գրուածները որ ժամանակի կը պատկանին :

Այս հեթանոս մատենագրութեան մէկ մասին հեղինակը համարում է Պերոզ, դէթ այսպէս էր Յունաց կարծիքը, որ քաղդէական գրականութեան գրուածների մեծ մասը Պերոզի ընծայում էին : Պերոզի գրուածները Մովսէսի մէջ բերած առաջին պատմական վկայութիւններն են, և թէպէտ հոդով չափ համոզուած ենք որ Խորենացին բնաւ ձեռքի տակ չէ ունեցել այս պատմագրի անունով քաղուած գրուածները, այլ Եւսեբիոսից է քաղել այն վկայութիւնները, Եւսեբիոսից էլ Աղէքսանդր Բազմավէպից վեր է առել այսու ամենայնիւ հինգերորդ դարումը արդէն Պերոզի անունը և նրա ընծայուած գրուածները առասպելներով պատած էին : Արեան և Արամեան գրականութիւններումը այսպիսի օրինակներ պատահում են, ուր մի պատմական կամ նոյն իսկ դիւցազնական անձի տալիս են մի ամբողջ սկզբնական գրականութիւն, որին տալիս թէ և ուրիշ ուրիշ ծագում ունին, բայց և այնպէս մի հոչակաւոր հեղինակի են ընծայում :

Երանք որ Պերոզի անձնաւորութեան և գրուածների մէկ քանի հանգամանքները քննել են, ակն յայտնի տեսնումեն թէ այս անձը պատմական անձ է, և քաղդէական գրականութեան զիտական դարումը ապրում էր, Աղէքսանդրի ժամանակից փոքր ինչ առաջ, բայց յետոյ Սիբելլաներից մէկի առասպելական պատմութեանը հետ միացրել են նրան, այն պատճառով որ ինչպէս երևում է Պերոզ իր գրուածներումը շատ անգամ դիմել Սիբիլեան գրքերին ու պատգամներին [15] : Այլ և այլ քննադատներ կարծում էին թէ Պերոզ քաղդէա-

15 Ուրիշները ընդհակառակն կարծում են թէ Պերոզ մի ազգիկ անէր, որի շատ լաւ կրթութիւն էր առել, այնպէս որ շատով Սիբիլլաների կարդը ընկալ, և թէ բարեբնեան կամ քաղդէական Սիբիլան որ Տարկուինոսի Սիբիլեան գրքերը բերել էր, նոյն Պերոզի աղջիկն էր : Ծ. Թ.

կան կամ հրէական անուն է, բայց Պ· Բընանը ցոյց տուաւ որ Պերոզի բուն անունը «Ֆիրուզ» էր, որ Յոյները օրինակելով ապաւաղել էին:

Պ· Միւլլերի Պերոզի անունով հաւաքած հատուածներում, երևում է ընդհանրապէս մեր կարծիքի ապացոյցը, որով հաստատում ենք թէ Յոյները քաղդէական նախնի մատենագրութեան շատ գրուածները այս մատենագրին էին ընծայում: Եւ յիրաւի, հելլենական աւանդութիւնների նայելով՝ Պերոզ ոչ միայն պատմական գրքեր է յօրինել, ինչպէս են Բաբելացոյ և Քաղդէացոյ երկրի պատմութիւնները, հապա նաև աստղաբաշխական և աստեղագիտական գրուածներ: Յունաց և Հռովմայեցոյ համար Պերոզ քաղդէական գրականութեան ներկայացուցիչն էր, և թէպէտ Պերոզի կեանքը գրողները գրեթէ իրա ժամանակակից էին, բայց և այնպէս իրանց գրութիւնները առասպելական զրոյցներով և թանձր կեղծիքներով լցրին: Դիտենք որ աւանդութիւնները մանաւանդ Արիստոտելը միշտ շատ դիւրին կերպով են առաջացել· շատ անգամ պատահում է մեզ տեսնել պատմական անձեր, որ իրանց մահից յետոյ՝ երբեմն էլ կենդանութեան ժամանակ, իրանց ճշմարիտ պատմութիւնից զրկուում են և առասպելախառն պատմութեան պատուին են արժանանում: Այսպէս Պերոզ Մովսէս Խորենացուց շատ առաջ՝ իրա առասպելախառն պատմութիւնը ունէր, որ այս պատմագրին օրերումը արդէն հասարակաց էր դառել: Խօսքս չերկարացնեմ: Մեր օրերումն իսկ Բուրդերը ժօրէր կոմսին գերութեան առասպելախառն պատմութիւնը գրեցին· ժօրէր կոմսին եմ ասում, որ մեր ժամանակակիցներից շատերը անձամբ ճանաչել են, բայց նրա պատմութիւնը Աղէքսանդրի և Նապօլէոնի վրայ Արիստոտելը մեզ եկած առասպելների քով դասուելու արժանի է:

Արիստոտելին սովորաբար Յոյն պատմագիրների շարքումն են դասում· բայց հաւանական է որ նախնի գրականութիւնը ներկայացնող հեղինակներից մին է: Առաջին անգամ Նիբուր գտել է այս մատենագրի արևելեան ծագումը, և ջանացել է ցոյց տալ որ «Աբիդենոս» անունը «Աբդ» կամ «Եբեդ Հէյմահ» անունի հետ մերձաւորութիւն ունի:

Այսպէս՝ թէ իր պատմութեան սկզբումը արդէն՝ խորենացին յիշում է Պերոսին, ասելով թէ քաղդէական գրքերը յունարէն թարգմանել է։ Այս տեղ Պերոսը իբրև հեղինակ չէ յիշատակուում, այլ իբրև լոկ թարգմանիչ, որ թագաւորների հրամանով յունարէն է թարգմանում տաճարների և աշխարհակալների գիւանատուները։ Մէկ խօսքով Պերոսը այն թարգմանիչների գլխաւոր ներկայացուցիչն է, որ աշխատել են յունարէնի փոխել քաղդէացոց կրօնական և արտաքին գրականութիւնը։ Փոքր ինչ յետոյ Մովսէս գովում է այն հիմնադրութիւնները, այն քաղաքական բարեկարգութիւնները, որ Քաղդէացոց, Ասորեստանցոց և Յունաց գրքերումը նշանակուած են։

Եթէ քաղդէական աղբիւրներից մեծ օգուտ չէ քաղել Մովսէս, պատճառն այն է որ Յունաց վիպասանութիւնը գերազանց է համարել, ինչպէս որ ինքն էլ ասում է։ Ահա այս պատճառով է որ քաղդէական գրականութեան մի հին գրուածքը մինչև մեզ է հասել՝ որ Աղէքսանդրի Ասիայումը յանձն առած աշխարհակալութիւնների ժամանակ յունարէն թարգմանուած է։ Գանք այժմ այս գրքի վրայ խօսելու։

Վերևում բաւական երկար խօսեցանք այն նշանաւոր հանգամանքի վրայ, այսինքն թէ Քաղդէացոց հեթանոս գրականութեան կործանելուն և ասորի քրիստոնեայ գրականութեան ծաղկիլ սկսելուն մէջ բաւական ընդարձակ ժամանակամիջոց կայ, և Ջանացինք ցոյց տալ որ Հայ մատենագիրների գրքերը կարող են ըստ մասին այս պակասը լրացնել։ Վասն զի նրանց մէջ առաջ բերուած են այն միջին դպրութեան հատուածները, ուր երևում է քաղդէական գրականութեան անհետանալն ու ասորականին ձևաւորուիլը։

Խորենացին աղբերի ծագումը պատմելուց և Հայաստանի նախնի դիցաբանները սուրբ Գրոց ցեղաբանութիւնների հետ միացնելուց յետոյ՝ պատմաբանը ասում է թէ պիտի սկսի աղգային պատմութեան վերաբերեալ անցքերը պատմելուցոյց տալով թէ որ տեղից է քաղել իր աղբիւրները։ Իրա ասածին նայելով՝ Վաղարշակ Հայաստանի Արշակունեաց իշխանութեան առաջին թագաւորը, քաղդէարէնի ու ասորերէնի տեղեակ մի գիտնականի յանձնել է Պարսկաստանի դիւանատուներից քա-

դել հանել Հայոց պատմութեան վերաբերեալ տեղեկութիւններ։ Մար Աբաս Կատինան, այսպէս էր Վաղարշակի պատգամաւորի անունը, գնում է Նինուէ, ասում է Մովսէս· Արշակ որ նոյն միջոցում Պարթեւաց վրայ թագաւորում էր, երբ իրա եղբօր նամակներից Մար Աբասի գալստեան պատճառն իմացաւ, հրամայեց որ իր գիւանատուները բաց անեն և թոյլ տան որ ասորի դրագէտը նրանց հարստութիւնները քննէ ու գտնէ։ Մար Աբաս Կատինան այլ և այլ ձեռագիրների միջից գտնում է մի գիրք որի վրայ դարձնում է իր ուշադրութիւնը· այն գրքի վերնագիրը, ասում է Խորենացին, այսպէս էր·

«Այս մատեան հրամանաւ Աղէքսանդրի, 'ի քաղդէացւոց բարբառոյ փոխեալ 'ի յոյն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս»։

Այս գրուածքը բովանդակում էր Հայաստանի պատմութիւնը աշխարհի սկզբից Մազդեզեան գաղափարներով, մինչև Մակեդոնացոց տիրապետութեան ժամանակ, այն բազմաթիւ իշխանների երկարատև յաջորդութիւնը, որ մէկզմէկու հետ միացող օղակների ընդարձակ շղթայի նման, տարածւում է ջրհեղեղից մինչև Վահէ, հայկազեան իշխանութեան վերջի թագաւորը, որ Աղէքսանդրի զօրավարներից մէկին ձեռքովը ըսպանուեցաւ, որով և հայկազեան թագաւորութիւնը կործանուեցաւ

Մար Աբաս Կատինայի խօսքերից երևում է, որ այն գիրքը որ տեղից հանել է նա Հայոց պատմութիւնը, ուրիշ ազգերի պատմութիւնն էլ բովանդակում էր, բայց մինքը Հայաստանի յիշատակարանների վերաբերեալ կտորները միայն օրինակելով բաւականացել է, որ և իսկոյն յոյն բնագրից ասորերէն թարգմանեց։ Մար Աբաս Հայաստան որ դարձաւ, իրա օրինակած բնագիրը ասորի թարգմանութեանը հետ միասին յանձնեց Վաղարշակին· թագաւորը այս յիշատակարանին յարգն ու արժանաւորութիւնը լաւ ճանաչելով՝ նրա գլխաւոր հատուածները արձանների վրայ փորագրել տուաւ, որպէս զի ամենայն ոք կարողանայ իմանալ իր ազգի հնութիւնն ու պատմութիւնը։

Այսպէս է Մովսէս Խորենացուն պատմածը, որ առաջի բե-

բան անհաւատալի է երևում մեզ, եթէ պատմաբանին գործածած աղբիւրները բառ առ բառ ընդունինք, և եթէ ստոյգ ճշմարտութիւնը չգտնալանենք այս առասպելական ժամանակագրական սխալներով լիքը գրուածներից, որ ամենևին զարմանք չէ. վասն զի նոյն բանը պատահում է մեզ տեսնել աղանդների միաբանութեան ժամանակներում ծաղկած մատենագիրների մէջ՝ Արևան և Արամեան գրականութիւններում, երբ քաղդէական և յունական գաղափարներն երևում էին տակաւին քրիստոնեայների գրուածների մէջ:

Բոլոր այն մատենագիրները որ Ֆրէրէից սկսեալ կասկածի տակ են քցում, ոչ միայն Մար Աբասի Հայոց պատմութիւնը այլ և այս մատենագրի գոյութիւնը, ճշմարիտ ասելով, Պ. Կատրմէր ամենից խիստն է: Իրաւ է որ հայկական ուսումնականութեան ներկայացուցիչները, Վենետիկի սուրբ Ղազարու Ակադեմիայի գիտնական վարդապետները, Ֆրանսիայի Ակադեմիայի գիտնական անդամին կարծիքը մեժեցին: Նրանից յետոյ Պ. Դիւլորիէն էլ Պ. Կատրմէրի փաստերի դէմ կանգնեցաւ, ու հերքեց այն խաբեբայութեան զրպարտութիւնը որ այս գիտնականը Խորենացու պատմութեանը վրայ կոչրել էր: Իսկ մենք ոչ Պ. Կատրմէրի անձնիշխան կարծիքները կը հաստատենք, և ոչ Խորենացու պատմածները իրա բոլոր հանգամանքներովը կընդունինք, որովհետև կարծում ենք թէ մի ուրիշ ճանապարհ կայ, որով կարելի է մէկ կողմից Հայաստանի պատմագրի և Պ. Դիւլորիէի ասածները արդարացնել. և ուրիշ կողմից Պ. Կատրմէրի կարծիքները ուղղել: Մեր նպատակն է այն շաւիղն վրայ կանգնել, որ աւելի մօտենում է ճշմարտութեան, և ոչ թէ կարծիքական սահման ճանապարհների վրայ խոտորիլ:

Ընթերցողները եթէ յիշում են մեր ասածները. միջին դպրութեան զարգացման մասին, որ քաղդէական և ասորի գրականութիւնները մէկ մէկից բաժանում է, այնիսկ ադրութեան ժամանակի մասին եմ ասում, որի գոյութեանը մինչև ցայժմ ոչ ոք չէ յայտնել, թերևս մեր կարծիքները աւելի ընդունելի ու հաւանելի երևին նրանց:

Պ. Կատրմէրի կարծիքովը, Նինուէն, և այս մասին մենք

էլ միաբանում ինք նրա հետ, Նինուէն արդէն վաղուց կոր-
ծանուել էր՝ և հաւատալու բան չէ որ այն ժամանակ, երբ
Պարթևները Սելևկիայիներից զլուխ քաշեցին, Ասորեստան-
ցիները իրանց ազգից թագաւոր ունեցած լինելին և Նինուէն
կարճ միջոցում նոր թագաւորութեան մայրաքաղաք դա-
ռած : Նոյն զիտանական անձը ասում է դարձեալ թէ Աղէք-
սանդր Մակեդոնացին Մար Աբասի յիշած պատմական գիրքը
քաղդէարէնից յունարէն թարգմանելու ոչ ժամանակ է ու-
նեցել և ոչ կամք՝ վերջապէս թէ Մար Աբաս Կատինայի ա-
նունը ցոյց է տալիս որ այս մատենագիրը Արշակի ժամանակ
չէր ապրում, վասն զի նրա անունը կազմող բառերը Ասորոց
մէջ միայն քրիստոնէութեան ժամանակ սկսան երևիլ : Բոլոր
այս խօսքերից ուսումնական արևելագէտը հետևացրուց թէ
Մովսէս Խորենացու պատմութիւնը խաբեբայութեան վրայ
հիմնուած է, և այն յունարէն թարգմանուած գիրքը թերևս
Պերոզի դրուածքի մէկ օրինակն է : Պ Բընան, որ Պ· Կատր-
մէրի կարծիքին հետ միաբանեցաւ, աւելի պարզեց այս խընդ-
իրը՝ ասելով թէ Մար Աբաս Կատինայի գիրքը Եղեսիայի
դպրոցից ելած ասորի մատենագրի աշխատութիւնն է, որ ժա-
մանակագրական սխալմունքով իր ժամանակից առաջ է դաս-
ուել : Միւս կողմից Պ· Դիւլօրիէն Մար Աբաս Կատինայի գիրքը
Վաղարշաբի օրովը գրուած է համարում և անկարելի չէ ե-
րևում իրան ընդունել որ Նինուէի զիւանատուները Սելևկ-
իայիների ձեռքից Պարթև թագաւորների ձեռքը անցկա-
ցած լինին, որ տեղ և զանուում էին երբ զիտական Ասորին
իր քննութիւնները անելու եկել էր : Վերջապէս ցոյց տալու
համար թէ Մար Աբաս անունը քրիստոնէութեան ժամանակ-
ներից առաջ էլ կարող էր գործածուիլ Պ· Դիւլօրիէն յիշում
է մի անձը «Մար Ինաբ» անունով, որ Աբգարի և Յիսուս Քրիս-
տոսի օրոնն էր ապրում[16] :

16 Պ· Դիւլորիէի կարծիքի հետ միաբանում է և Պ· Էմինը, և հայագէտ Ֆլ-
բանիայան խօսքերը կրկնում. թէ Նինուէի զիւանատունները, եթէ ոչ ամբող-
ջապէս գոնէ բաս մասին, կարող էին Սասանեանց ձեռքից Պարթև թագաւոր-
ների ձեռքը անցնիլ, և թէ Խորենացին իր պատմութեան մէջ յիշում է Մ-
անձը, որ Աբգարի քրիստոնէութեան հետ ծանօթանալուց առաջ, Աղձնեաց գա-
ւառի Բգեալ (կառավարիչ) էր (Խոր· Գր· Բ· գլ· Իե·) : Վերջապէս Պ· Էմինը

Ի հարկէ առաջի բերան այս պատճառները գոհացուցիչ են երևումն բայց շատ դժուար է ընդունել որ ասորի լեզուն մեր թուականութիւնից երկու դար առաջ արդէն կազմուած լինէր, ինչպէս որ Խորենացին ուզում է հաւատացնել, որովհետև գիտենք թէ այս բարբառը քրիստոնէութեան դարերումը սկսաւ կազմուիլ: Մեր կարծիքովը Մար Աբաս Կատինան, որի անունը ասորական ծագում է ցոյց տալիս, այն նոր բաժին գրականութեան մատենագիրներից մինն է, որ մեր թուականութեան առաջի դարերումը սկսաւ ձևաւորուիլ ու զարգանալ: Դարձեալ Մար Աբասը քրիստոնեայ չէր, ինչպէս որ Պ. Բընանի կարծիքիցը երևում է, վասն զի Խորենացուն մեզ հաղորդած հատուածներումը քրիստոնէութեան ամենափոքր գաղափարը անդամ չկայ. և ոչ այսքան միայն, այլ և ամբողջ պատմութեան մէջ ոչ մի յիշատակութիւն չկայ սուրբ Գրքից. ընդհակառակն հեթանոս ժամանակների զգայմունքները տիրապետումն են այն գրքի մէջը, և մասնաւորապէս Մազդեզեան գաղափարները: Մար Աբաս Կատինայի հաւաքած և Մովսէս Խորենացու համառօտած գրքին նայելով, նախ և առաջ առասպելական էակներ, հսկայներ տիրեցին աշխարհքի, ու աստուածների հետ պատերազմեցին. բայց աստուածները խայտառակումն նրանց՝ կործանելով այն աշտարակը, որով կամենում էին մինչև երկինք բարձրանալ: Այս տեղ զգում ենք արդէն, որ Խորենացու համառօտած գրքի հեղինակը այլ և այլ աղանդները միտբանեցնելու ժամանակին տիրապետած կարծիքների տէր էր, և ահա սրանով բացատրում ենք որ այս գիրքը քրիստոնէութեան թուականից առաջ գրուած չէ: Եւ յիրաւի, Մար Աբաս Կատինան յիշում է Զրուան, Տիտան և Յապեդոսթէ հսկայները, որ այլ և այլ աղանդների միաբա-

աւելացնում է, թէ զարմանք չէ որ Աղէքսանդր Մակեդոնացին քուրմերի խօսքով իր ուշադրութիւնը դարձրած լինի Խորենացու յիշատակած քաղդէական յիշատակարանի վրայ, եւ յուսարէն թարգմանելու հրամայած (տես Нст Арм. Моис. Хор. предисл.): Այս կարծիքները լսելուց յետոյ, ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում ենք Պ. Լանգլուայի յետագայ խօսքերի վրայ, որ Խորենացու առաջ բերած յիշատակարանի բովանդակութիւնը քննութեան տակ քցելով, հաստատում է թէ նրա հեղինակը քրիստոնէութեան առաջին դարումը պէտք է ծաղկած լինի:

Ցան. Թարգ.

նութեան դարումը շատ հռչակուած էին Արևելքումը, և նոյն իսկ այն ժամանակներն էին հնարուելիքը Մովսէս ասում է թէ այդ քաղդէական գիրքը Աղէքսանդրի հրամանովը յունարէն թարգմանուել է։ Եթէ Մար Աբաս Կատինան, Եդեսիայի քրիստոնէական դպրոցիցը լինէր, կը ջանար այս առասպելական էակների մասին այն մերձաւորութիւնը անել որ Խորենացին չէ մոռացել երբ Յաբեթի աղգաբանութիւնը նշանագրում է. «Յաղեդոսթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլաթ. որ է Յաբեթ, Գամիր, Թիրաս, Թորգոմ։

Ի՞նչ պէտք է հասկանանք ուրեմն Խորենացու ասածից, թէ վաղարշակ մարդ յուղարկեց Նինուէի դիւանատունները քննելու։ Մենք կարծում ենք թէ լոկ ժամանակագրական մերձաւորութիւն է այս Խորենացուց մտածած, բայց թէ ինչ նպատակով՝ շուտով կը հասկանանք։ Խորենացին, ինչպէս բոլոր իրա ժամանակակից և դասակից ընկերները, երբեմն դիւրահաւան լինելով, ճշմարիտ ասենք, ժամանակ առ ժամանակ այնպիսի անդիտութիւններ է արձանագրում, որոնց ճշդութիւնը կասկածելի է երևում, այնպիսի վարպետ ժամանակագրական մերձաւորութիւններ է անում, որ միայն նրանով արդարանում են որ հին ժամանակուայ մատենագիրների մէջ քննադատութիւն ասած բանը չկար։ Էլ ոչ ոք չէ կասկածում այն շինովի թղթերի վրայ, որ իբր թէ Աբգար և Քրիստոս մէկզմէկու են գրել, և աստուածաբանները հերքում են նրանց իբրև անվաւեր վկայութիւններ, ինչպէս նաև Ադամին կտակը և ուրիշ զարմանալի գրուածները, որ քրիստոնէական առաջին դարերի աղանդաւորների հնարքներն են[17]։ Մովսէս՝ որ այս տեսակ գրուածների յարգ ունեցած ժամանակին էր ապրում, միանգամայն և իր պատմութեան մէջ առաջ բերած ժամանակագրական մերձաւորութիւնների վրայ միշտ յաջող

17 Թէ Ադամայ կտակին եւ նրա նման ուրիշ յիրաւի ծիծաղելի գրուածների վրայ տարակուսում են աստուածաբանները եւ հերքելով հերքում են նրանց իբրեւ ապօրինի ու անվաւեր գրութիւններ, այդ ամենեւին զարմանալի չէ. զարմանալին եւ միանգամայն անհասկանալին այն է՝ որ Լատին աստուածաբանները մերժում են մի այնպիսի պատկառելի աւանդութիւն, որի վկայութիւնը նոյն ինքը սուրբ Աւետարանը տալիս է մեզ։ Այդ աստուածաբանները լաւ կանէին, եթէ աշխատէին իրանց միջից վերացնել այն սուտ մատեանները որ Լատին կրօնաւորները իրանց անձնական օգտին համար այլ եւ այլ ժամանակ երեւան

կերպով չէ վիճուում թերևս մի ազգային աւանդութեան հաւատ ընծայելով, այնպիսի ժամանակագրական սխալ գործեց, որի պատճառով քննադատները խստութիւնով դատեցին նրան և մինչև անգամ նենգաւոր համարեցին։ Իսկ Վաղարշակի իր եղբօր Արշակին ուղղորդած ուսումնական դեսպանութեան պատմութեան մէջ ուրիշ բան չենք տեսնում, բայց միայն մի լոկ շողոքորթութիւն Սահակ Բագրատունուն, որի խորենացին ընծայել էր իրա կիրքը։ Հեղինակը նրան նմանեցնում է Վաղարշակին, որ իբր թէ մի զրադէտ Ասորեցու յանձնել էր Հայոց Պատմութիւնը գրել ինչպէս որ ինքը Սահակ Բագրատունին՝ Մովսէսից խնդրեց ազգային յիշատակարանները ժողովել։ Այս շատ բնական բան է, և մեր կարծիքովը սրանով բացատրւում է այս հնարած առասպելական պատմութիւնը։ ուրիշ բան է եթէ ընդունինք որ խորենացին մի ծուռ աւանդութիւնից խաբուեցաւ։ Խնդիրը այս կերպով լուծուելով, Պ. Բրնանի կարծիքը արդարանում է, այսինքն թէ Մար Աբասի գիրքը իր գրուած ժամանակից առաջէ դատուել այս պայմանով միայն՝ որ ոչ թէ քրիստոնէի, այլ հեթանոս մատենագրի աշխատութիւն է, որ Քրիստոսի ժամանակները ապրում էր, և այնպիսի բարբառով էր գրում որ անտարակոյս այն փոխադրութեան ժամանակի լեզուն էր, որ քաղդէականից յետոյ և ասորականից առաջ ծագեցաւ։

Ուրեմն Արամեան բարբառների և գրականութիւնների ուսման մէջ շատ հետաքրքիր է այն միջին բարբառի գիտութիւնը, որ քաղդէականը ասորականի հետ միացնում և այս կերպով հեթանոսական ժամանակները քրիստոնէական դարերի հետ կապում է։ Կարծեմ թէ իրաւունք ունեցանք ասելու թէ հայկական գրականութեան մէջ գտնուում այն մի-

հանեցին։ Ա. յայտնս են սուրբ Պետրոսի էջ։— գլուխը, մէկ ուրիշի էջ։ ձեռները երրորդին էջ։ ոտները, եւ այլն, որոնց մինչեւ հիմայ երկրպագութիւն է անում պարզամիտ ժողովուրդը։ Մենք չենք կամենում այս տեղ աստուածաբանական խնդիրների մէջ մտնել, եւ Արդարի ու Յիսուս Քրիստոսի թղթերին վաւերական լինելը ապացուցանելու. ընթերցողը կարող է իր հետաքրքրութիւնը յագեցնել կարդալով Հ. Ինճիճեանի հնախօսութեան Գ. հատորի 55 եւ 185 երեսները, եւ Վեհափառ Մատթէոս կաթուղիկոսի «Հայելի աստուածային շնորհաց» անունով գիրքը։ Ասա. Թարգ.

ութեան կապը որ այս երկու գրականութիւնները մէկմէկու հետ կապում է։

Մար Աբաս Կատինայի գրքին էական մասը պահպանել, և մինչև մեզ հասցրել է Մովսէս Խորենացին, որի պատմութեանը մէջ միայն գտնուում են այս գրքի հատուածները։ բայց ինչպէս երևում է Ս· Հերոնիմոս էլ այս գրուածին խորհուրդ է հարցրել։ Մար Աբասի աշխատութիւնը երկու գլխաւոր մաս է բաժանուում։ Առաջին մասը համառօտում է այն քաղաքական գրքի պատմական կտորները, որ քրիստոնէութեան թուականութիւնից երեք դար առաջ յունարէն է թարգմանուած էր։ Այս գիրքը բովանդակում է այն անցքերի պատմութիւնը, որ պատահել են Հայաստանում, դիւցազնական ժամանակներից սկսեալ և մինչև Վահէի մահը և Հայկազանց իշխանութեան կործանումը։ Երկրորդ մասը Մար Աբասի բուն երկասիրութիւնն է, իբրև յաւելուած առաջի գրքին· այս մասումը հեղինակը սկսում է Վաղարշակի թագաւորութիւնից և գալիս հասնում մինչև Արտաշէս առաջինը, մեր թուականութիւնից գրեթէ 114 տարի առաջ։ Այս պատմութեան վերջանալու ժամանակն էլ՝ անտարակոյս տեղիք տուաւ Խորենացուն կարծելթէ Մար Աբասը Վաղարշակի ժամանակակից էր։

Այն տեղեկութիւնները որ Խորենացին Մար Աբասի գրքից քաղել հանել էր, իր պատմութեան առաջի գրքի վերջը բռնում են, սկսեալ ինններորդ գլխից մինչև երեսուներեքերորդ և վերջի գլուխը, և շարունակում երկրորդ գրքում· առաջի գլխից մինչև ինններորդը, այս վերջի գլուխն էլ հաշուելով։ Արդէն ասացինք, որ Մար Աբաս Կատինայի գրուածին առաջի մասը բովանդակում է Հայկազեան թագաւորների յաջորդութիւնը, իսկ երկրորդ մասը խօսում է Արշակունեաց թագաւորութեան սկզբնական ժամանակների վրայ։ Այս երկրորդ մասումը մի շատ հետաքրքիր գլուխ կայ պատմութեան համար, այն է Հայաստանի քաղաքական և տնտեսական դրութեան համառօտ նկարագրութիւնը, Արշակունեաց օրովը։ Այս նկարագրութիւնը նրանով էլ աւելի հետաքրքիր է հնագէտների համար, որ մեր կարծիքովը Պարսկաստանի քա-

էր ապրում, իր ժամանակի երևելի անձինքներից մինն էր։ Սկզբումը քրիստոնէական ուղղափառ եկեղեցու օրէնքներին հաւատարիմ մնալով՝ իր ազգու ճարտարախօսութիւնովը, որ մեծ գովասանքով յիշում են Ս. Ս. Հերոնիմոս, Նիկեփորոս և Օգոստինոս, սաստիկ պատերազմեցաւ այն հերձուածների դէմ, որ իրա օրովը բազմացել էին Ասորոյ երկրումը։ Բայց իր կեանքի վերջի օրերումը մոլորութիւնների մէջ ընկնելով, Վալենդեան հերձուածից տարբեր հերձուած էր կազմել և իր անունը նրան տուել։

Խորենացին ուրիշ ասորի մատենագիրների վրայ էլ խօսում է, բայց նրանց անունները չէ տալիս, միայն մի անգամ յիշում է Բարսումայ անունով Ասորեցուն, որ Պարսից Շապուհ թագաւորի քարտուղար խառնհրուտի հետ միասին Յուլիանոս Ուրացողի ձեռքը գերի էր ընկել։ Այս խառնհրուտը, որ Կ. Պոլսումը քրիստոնեայ դարձել ու Եղիազար անունը ընդունել էր, Շապուհի և Յուլիանոսի պատմութիւնը գրեց յունարէն լեզուով և նոյն լեզուի փոխեց Բարսումայի պատմութիւնը աշխարհի նախնական ժամանակների վրայ։ Պարսիկները, ասում է Մովսէս, Բարսումային Ռասասոհտան էին կոչում։

Մովսէս Խորենացու առաջնորդ առած ասորի աղբիւրների վրայ ընդհանուր դիտողութիւն անելով՝ ուրիշ բան չենք մեզ ասել այն տեղեկութիւնների վրայ, որ Արամեան գրականութիւնից առնուած ու իր պատմութեանը մէջ համառօտուած են։ Խորենացին թէ և իր պատմութեան այլ և այլ հատուածներումը այնպէս է ցոյց տալիս, որ իբր թէ Բարդածանից և Ղերուբնայից առաջ կար մի ասորական դպրութիւն, և թէ Մար Աբաս Կատինայի գիրքը, որ իր կարծիքովը մեր թուականութիւնից երկու դար առաջ է յօրինուել, այս դպրութեանն է պատկանում, բայց պէտք է կարծել որ հայ Երոդոտոսի կարծիքը փոքր արժողութիւն ունի իբրև լեզուագիտական քննադատութիւն։ Մար Աբաս Կատինան, ինչպէս որ վերևումը ձանացինք ցոյց տալ, հեթանոս մատենագիր էր, և քրիստոնէութեան դարերից առաջ հին դիւանագրութիւններումը եղած վկայութիւնները գործ էր դրել։ Ինչպէս

Բայց եթէ քաղդէական գրականութիւնը երկար ժամանակ յաջողակ կերպով զարգացաւ, ասորականը ընդհակառակն շատ կարճատև. կեանք ունեցաւ, վասն զի նրա փառաւոր ժամանակներից փոքր ինչ յետոյ պատահեցաւ և նրա նուաղումն ու անկումը: Մեր շրջանից դուրս է այսպիսի ծանր նիւթի վրայ ընդարձակուիլը ոստի և այսքանով բաւականալով մեր խօսքը վերջացնում ենք:

Դ·

ՆԱԽՆԹԱՑ գլուխներում ցոյց առինք այն յունական և քաղդէական աղբիւրների յարգն ու պատուականութիւնը, որոնցից Խորենացին քաղել հանել էր իր պատմութեան նիւթը: Մնում է մեզ այժմ քննել թէ Հայաստանի պատմագիրը ինչ օգուտ քաղեց հայկական աղբիւրներից և գիւտանատուններից հանած տեղեկութիւններից: Առաջինները՝ թէ և փոքր են թուով, այսու ամենայնիւ մեծ յարգ ունին, որով հետև մի նորածին գրականութեան հնաքերը՝ ինչպէս նաև վերին Ասիայի ժողովուրդների հնումը ունեցած կրօնական և քաղաքական կարգերը ցոյց են տալիս:

Ուրիշ տեղ ցոյց առինք որ մեր թուականութեան հինգերորդ դարուց առաջ, հայկական լեզուն լոկ գռեհկական բարբառ էր նշանագիրներից զուրկ, և գիտնական լեզուների կարգը դասուելու անարժան: Բայց այս լեզուն թողել է մեզ մի քանի հատուկոտոր հատուածներ որոնց մէջ երևումէ այն տկար մշակութիւնը, որ այլ և այլ ժամանակ երևեցաւ ժողովրդական բանասաղծութիւնների ձևով: Այս տեղ ամենևին զարմանալու բան չկայ, որովհետև Արևան և Արամեան ցեղերից առաջ եկած ժողովուրդները ամենն էլ ունեցել են մի նախնական դպրութիւն որ իրա մանկութեան օրերումը շատ քիչ զարգացած էր: Այս դպրութիւնը հնագոյն լեզուի պատկերն է, իրա կազմուելու ժամանակից մնացած, որ բնաւ չէ զիջանում այն պահանջմունքներին որ մի առաւել զարգացած դպրութիւն հետզհետէ ընդունում է: Բանաստեղծութիւնը նախնական ժողովուրդների սեպհականութիւնն է, նրանց հան-

սէսի պատմութիւնը լոյս ընծայողները երկար ժամանակ բուն բնագրից չկարողացան զանազանել այն հատուածները, որ հեղինակի արձակ շարադրութեանը հետ խառնուել էին: Այս վերջի ժամանակներում միայն Մխիթարեան վարդապետները նշմարեցին, որ Խորենացու պատմութիւնը աղգայի նախնի բանաստեղծութեան հեռքեր է բովանդակում: Պ· Մկրտիչ Էմին գիտնական հայազգին՝ իր հայերէն լեզուով հրատարակած աշխատութիւնումը շատ յաջողակ և ճարտար կերպով ցոյց տուաւ այն բանաստեղծութիւնների կամ աղգային երգերի յարդը, ծագումն ու տեսակները: Նրանից մի քանի տարի յետոյ, Պ· Դիւլորիէն, գիտնական հայազգին աշխատութիւնը առաջնորդ առնելով, բոլոր գիտնականների քննութեանը ներկայացրեց Հայաստանի ժողովրդական երգերը: Պ· Դիւլորիէի աշխատութիւնը նոր դիտողութիւններ և առողջ դատողութիւններ է բովանդակում այն երգերի վրայ, որոնց վրայ Պ· Էմինը և Մխիթարեան վարդապետները արևելագէտ եւրոպացու ուշադրութիւնը հրաւիրել էին:

Մեր նպատակը այն չէ որ քննենք Հայոց նախնական բանաստեղծութեան տեսակները, բայց որովհետև Պ· Պ· Էմինի և Դիւլորիէի աշխատութիւնները բաւական ձայն հանեցին գիտնական աշխարհքի մէջ, կարժէ որ կրկին դանք նրանց վրայ խօսելու: Այս տեղ պէտք է ասենք միայն, որ այս աղգային կրօնական ու սւանդական երգերի մտաւորական արժողութիւնը շատ գեղեցիկ կերպով որոշել է հայագէտ Ֆրանսիացին, որի աշխատութեանը կարող է դիմել ընթերցողը, եթէ ուզէ հիմնաւոր տեղեկութիւններ ունենալ այս խնդրի վրայ [18]:

Հին Հայաստանի պատմական երգերը, որոնց վրայ Խորենացին շատ անգամ խօսում է իր պատմութեան ընթացքումը, սկսում են աղգային պատմութեան դիւցազնական ժամանակներից և մեր թուականութեան 150 թուին դադարում, այսինքն Արշակ երկրորդի թագաւորութեան օրովը: Այս երգերի ու բանաստեղծութիւնների մեծ մասը շատ հին ժամանակների են պատկանում: Մնացածները այնքան հին չեն, և

18 Journal Asiatilque, 1852 -

ընդ եղեգան փողՃուխ ելանէր ընդ եղեգան փողՃոց ելանէր· Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վազէր· նա հուր հեր ունէր· Ապա թէ բոց ունէր մօրուս, աչկունքն էին արեգակունք»:

Հայաստանի նախնի երգերից առաջ բերուած հատուածները բաւական են ցոյց տալու թէ մեր պատմաբանը ինչ օգուտ կարողացաւ քաղել իր հայենեաց բերանացի աւանդութիւններից, և թէ սրբան լոյս կարող էր ստանալ նախնական ժամանակների վրայ, եթէ հաւաքէր այն բանաստեղծութիւնները, որ ազգային կրօնների գաղանիքները յայտնում էին, և բանաստեղծօրէն պատմում էին անցած դնացած անցքերը և այն թագաւորների իշխանութիւնը, որոնց ցեղը մարել անցել էր: Խորենացուն շատ դիւրին կը լինէր իրա ազգակիցների և մանաւանդ Գողթն գաւառի բնակիչների յիշողութեանը դիմել, որոնք ուրիշ գաւառների Հայերից աւելի երկար պահպանեցին աւանդական երգերը, և սիրով կրկնում էին իրանց պապերի բերանից մնացած յիշատակները:

Պ· Էմինի աշխատութիւնը քննադատական ու կանոնաւոր մտքի գործ է, և ցոյց է տալիս թէ դիտական հեղինակը հըմուտ է լեզուագիտութեան յառաջադիմութեանը· և եթէ իրանից առաջ Մխիթարեան վարդապետները ճանաչած չըլինէին այս հնութեան հատուածների տեսակները, Պ· Էմինը սաեղծողի պատուանունին կարժանանար: Սակայն պէտք է ասել թէ ով որ էլ առաջին անգամ ցոյց տուաւ Հայաստանի նախնական դարերի այս հին մնացորդները, Պ· Էմինը նրանցից օգուտ քաղելու պատիւն ունեցաւ: Իսկ Պ· Դիւլորիէի աշխատութիւնը այն զգուշաւոր քննադատութեան գործն է, որ այժմեան արևելագէտների սեպհական է: Իր յիշատակարանի մէջ ուսումնական հայագէտը իրա մեծ հմտութեան փորձը ցոյց տուաւ մեզ, ինչպէս նաև հայկական լեզուի, գրականութեան և չափաբերութեան մէջ ունեցած խորին գիտութիւնը: Ցարակոյս չկայ որ Պ· Դիւլորիէն Մխիթարեան վարդապետների և Պ· Էմինի գրուածներից օգուտ քաղեց, բայց իրա անժըխտելի արժանաւորութիւնը այն էլաւ, որ իր նեղ շրջանից դուրս հանեց ու ընդարձակեց այն նիւթը, որի վրայ վերոյգրեալ ուսումնականները հայերէն լեզուով գրել էին:

մեծապէս յարգումէին այն ամէն տեսակ գրուածները, որ հասարակ անունով ասումէին գիւանագիր մատեանք, և Ասիայի թագաւորները իրանց պալատների մօտ մեծ շինուածքներ ունէին այն մատեանների պահպանութեանը համար, որոնք այն ժամանակներումը բովանդակումէին ազգերի մշտաւորական և պատմական դէպքերը: Գիտենք դարձեալ, որ այս մատեանները կարդի կանոնի դնելու համար էլ տեսչութիւն կար, և Խորենացին ասումէ թէ թագաւորները քաղաքական պաշտօնեաների յանձնումէին այն մատեանները ժողովել ու պահպանել: Հայաստանի պատմագիրը այս պաշտօնեաներին անուանումէ «յիշողութեանց վերակացուք»:

Այժմեան հնագէտներից որոնք քննեցին այն երկիրը, ուր ժամանակով Բաղդէացոց Ասորեստանցոց ու Պարսից հզօր տէրութիւնները ծաղկումէին, այն քաղաքներումը որ երբեմն լուսաւորութեան կեդրոններ էին և այժմ քար ու քանդ են էլել, մի քանի մնացորդներ գտել են այն շէնքերից ուր տեղ պահումէին գիւանական մատեանները: Սուրբ Գրքի վկայութիւնովը գիտենք, որ ժամանակով այս երկիրներումը բազմաթիւ պահարաններ կային գիւանական մատեանների. Պետրոսը, Սբիւղենոսը, Մար Աբաս Կատինան անտարակոյս այն տեղերից քաղեցին հին ժամանակների պատմութեան վրայ լոյս տուող տեղեկութիւնները:

Ուրեմն նախնի ժամանակներից սկսեալ՝ Արևելքի և մանաւանդ Տիգրիս գետի եզերքների տէրութիւնները իրանց գիւանատունները ունէին: Խորենացին իր պատմութեան մէջ շատ անգամ յիշումէ Հայաստանի և օտար երկիրների թագաւորական գիւանները. նա հաստատումէ թէ շատ հարուստ շտեմարաններ կային, որ տեղ ժողվուած էին ամէն տեսակ պատմական վկայութիւններ, կառավարութեան ստացուածների, և այլն ուրիշ բաների վերաբերեալ թղթեր, մէկ խօսքով մի ընդարձակ քաղուածք, որ տեղից գիտնականները կարող էին անյայտ ժամանակների վրայ տեղեկութիւններ պարտել, և ինչպէս Բաղդէացոց և Ասորւոց, նոյնպէս էլ Յունաց ու Եգիպտացոց օգնեցին յօրինելու այն թանկագին գրուածները, որոնց

ժառանգական երկիրներից յետոյ առանձին գաւառ կազմելով Հռոմայեցոց իշխանութեանը ներքոյ ընկաւ, որ նրա թագաւորների ընտրութեան իրաւունքը խլել յափշտակել էին։

Արդեօք Մար Աբաս Կատինան Հայ Աբգարների մէկի թելադրութիւնովը կամ թէ իրանից յորդորուեցաւ գրել իր պատմութիւնը, արդեօք Պարսկաստանի դիւանատունները մեզ էկել, թէ Եդեսիայի դիւանները միայն քրքրելով բաւականացել է, որոնք որ Մծբինից բերուած հարստութիւններովը ճոխացրել էր Աբգար, ահա այս հարցմունքներն են անում մեզ, որոնց լուծումը անկարելի է տալ։ Հաւանական է երևում միայն, որ այս տարի դիտակները մի դիւանատունից գտաւ այն քաղդէական ձեռագիրը յունական թարգմանութիւնովը, որ իր պատմութեան առաջին մասը գրելու օգնել է իրան։ Կարելի է ընդունել, որ Մար Աբաս Կատինան բնիկ Ատրոց երկրից կամ Միջագետքից լինելով՝ իր հայրենիքից չը հեռացաւ ամենևին, և միայն Ոսռոենեսի դիւանները քննելով բաւականացել է, որ յիրաւի անգին հարստութիւններ էին բովանդակում, վասն զի բաց 'ի այն յիշատակարաններից ուր սովորաբար այս տեսակ տեղեկութիւնները գտնուում էին, այն տեղ կային նոյնպէս զանազան նիւթերի վրայ գրուած գրքեր և դատաստանական ու իրաւաբանական գրուածներ։

Մովսէս Խորենացին Մար Աբասի գրքի բովանդակութիւնը պատմելուց յետոյ, յիշում է երբեմն դիւանատունները, մի հատուած կայ մանաւանդ որ պատմական մեծ արժողութիւն ունի, նրանից երևում է թէ հիները օրքան պատուական էին համարում այս տեսակ հիմնադրութիւնները, ինչպէս նաև նրանց մէջ պահուած զարմանալի կարգ ու կանոնը։ Այս տեղ Մովսէս որոշ խօսում է և մինչև անդամ յիշում է թէ ինչպէս իւրաքանչիւր մատեան և իւրաքանչիւր ձեռագիր որոշ նշանակուած էր։ Խօսքը Եդեսիայի պատմութեանը վրայ է Արշակունի վերջի թագաւորներից մինչև Աբգար ու Երուանդ։

«Ինդիր արասցես 'ի Գեղաքունի, 'ի գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին հաղներդութեանն՝ յերեքտասաներորդ թուին, զի վկայէ Յեդեսիայ դիւան լինել՝ ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱբգար, և զկնի Աբգա-

աստուածաբանական դրքեր, սկոլաստիկական մտոքի վէճեր պարունակող և ուրիշ անսակ անսակ անօգուտ աշխատութիւններ յօրինելով անցկացնէին, այլ հնութեան երևելի դրուածները օրինակէին, այսօրուան օրը մարդկութիւնը թերևս մի քանի դար առաջ գնացած կը լիներ, և մահմետական բարբարոս ժողովուրդները վաղուց արդէն ընդունած կը լինէին քաղաքակրթութիւնն ու լուսաւորութիւնը, որ դեռ նոր սկսումենք տարածել նրանց միջումը, թէպէտ և իրանք այդ քաղաքակրթութեան ու լուսաւորութեան բարիքները յամառութիւնով մերժումեն։

Ս.ռաքիկայ յօդուածներումը ցոյց տուինք, թէ ինչ բարձր տեղ է բռնում Մովսէս Խորենացին Արևելքի դրականական պատմութեան մէջ, և թէ ինչպէս փառաւոր կերպով հանդիսացել է իր հայրենիքի դրագէտների միջումը՝ հայկական լեզուի մտաւորական մշակութեան դարումը։ ցոյց տուինք նոյնպէս, թէ ինչ ծառայութիւններ է հատուցել պատմութեանը, քաղդէական, ասորի և հելլէնական հին մատենագրութիւնների մի քանի հատուածները աւանդելով, որ քրիստոնէութեան թըւականից նախընթաց ու յետագայ դարերումը այնքան ճոխացան ու զարգացան։

Ցոյց տուինք թէ ինչ յարգ ու արժանաւորութիւն ունի Խորենացու դիրքը, հերքեցինք այն քննադատների ծուռ կարծիքները, որ հայ պատմաբանին նենդաւոր անունը տուին, և նրա դլխաւոր աշխատութեան յարգը ջանացին նսեմացնել։ Տարակոյս չկայ, որ Հայ Երոդոտոսի յօրինած պատմութիւնը սխալներից ազատ չէ, և այս մատենադիրը սխալեցաւ ուզելով սուրբ Գրոց վկայութիւնները Քաղդէացոց և Յունաց դըրուածների կարծիքների հետ միացնել այնպիսի վարպետութիւնով, որ այլ և այլ աղանդների միաբանութեան ժամանակ ապրող հեղինակների սեպհական է, բայց յետ դառնանք այն ժամանակներին երբ դրումէր այս երևելի պատմաբանը, և կը տեսնենք որ Մովսէս իր ժամանակի կարծիքներից, իր դարուայ աւելորդապաշտութիւններից միշտ բարձր է կանգ-

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԹԱՐՎԻԶԵՅԻՈՅ ԳՐԱԾ ՕՐՀՆԷՆՔԱԹՈՒՂԹՆ

ՂԱՐԱԴԱՂՅԻՈՅ ՎՐԱՅ։

Յիսուսի Քրիստոսի Խաչափայտն ի Գողգոթայ տանողի ցեղէն ելած, Թատդէոս առաքելոյ համար, կօշիկ կարողէն սերած, սուրբ Տաթևի վանքի դաւազանակիր, սուրբ Բարդուղիմէոս առաքելոյ վանքի ղանդակ զարնող։ Գրիգոր լուսաւորչի մեռան բաժանող՝ Տէր Սրապիոն աւագ քահանայ և Տէրտէրակին Տիկին Բրաբիոն Խաթուն խանում և Թարվիզու բոլոր բնակիչք սուրբ Հայոց լուսաթաթախ հաւատքն դաւանողք. ծերք և երիտասարդք, աղքատք և հարուստք. խանք ու թանք. պառաւ կնանիք. հարսնէր սկեսուրնէր. աղճիկնէր. ծծից կլտրած և ծիծ ուտող մօրերնու փորումն եղած և դուրս եկած երեխայք. օրհնութեան կոնդակս լիք սրտով, խալվարով ղանթարով[1], խարարով. Ջանախանով[2], չվալով. տոպրակով. քիսով. Ջիբով. բըռնով. Ովիկիանոսի և Որմիոյ ծովով ուղարկումենք գայ հանի Ղարադաղու այսինքն Սև քարերու գիւղօրէից բնակիչ Հայերիդ վերայ ամէն տարի, ամէն շաբաթ, ամէն օր, ամէն սահաթ, ամէն դպղիղայ[3], ասացէք ամէն։

Երանելի Ղարադաղցիք, ձեր գովասանքն գրելոյ համար, որքան աշխարքումն թանակ՝ թուղթ կայ. բաւական չէ. ոչ մի մարդածին լեղու չէ կարող եղած Նոյայ սուրբ ադաւի երկիրս իջանելոյ օրէն մինչև ցայսօր ձեր պապի, պապի պապերի գովասանքն կատարեալ ասել ու գրել։ Ձեր դեղերն, անտառներն, սարերն, բաղերն, բախչէքն, դառներն, յորթէրն, ոչխարներն, էշերն, մատեանէրն, քուռակներն, աւանակներն, օրհնած ու գոված են, ուրեմն մեր բերանէն դուրս եկած քաղցր խօսքերն ձեզ համար քիչ են։

Դուք խելքք էք ղրախտի օձէն, իմաստուն Բահաղամի աւանակատպեսէն. դիտուն էք Փարաւոնի ատաղաբաշխներէն. Սողոմոն իմաստունի ծերան էք կերած, զօրեղ էք ինչպէս մար-

1 Քաշ Պարսկաստանի 30 փութ. 2 մեծ չուալ. 3 բոպլ.

գարէն Գողգաթ, շատուոր էք Եդիպտոսի դորտերիցն, միաբան էք ինչպէս մարեկս, հեղ և խոնարհ էք ինչպէս Քրիստոսի հեծեալն, վազկան էք քան զամէն կենդանի. եաքի ոտքով ականջ քորող էք: Երնէկ, հազար երանէկ ձեզ. Զարաղաղն դրախտ է, և դուք էլ նորա մէջի ծաղիկներն, պտուղներն, Գաբրիէլ Ռաֆայէլ և Միքայէլ հրեշտակներն: Ցիծ ուտող երեխեքանց նման անմեղ էք. Քրիստոսի դառան նման միամիտ, աշքերի նման լեզուով ճարտար, որբերի կանանց նման ճգնաւոր էք, գինու արաղի նման հարբեցնող, եղան նման վաստակաւոր մրջմի նման աշխատաւոր:

Օրհնած Զարաղաղցիք. երկնաքաղաքացիք, երանի է ձեզ որ աշխարքումն բարի անուն ունիք. ոչ ոքի վերայ սուտ խօսացող էք, և բամբասանք էլ չէք անել, ձեզ նման ոչ նախրուն ոչ մտուրուն կայ, ամէն մինդ մին մին լուսատու արեգակն էք. երկնից մեղրակն էք. պչաւոր ասաղն էք, ցիտան աղեղն էք. խակզբանէ մինչև ցայսօր բամբասուած չէք, ձեր երեսին սև մուր չէ քսվել, ձեր անուանը կեղտ չէ կպչել. ձեր ոտքին քար չէ դպչել. ինչպէս կատու ձեր մէջքին վերայ չէք ընկնիլ, ասացէք ամէն:

Ղամրարափայլ, լուսափայլ Զարաղաղցիք, դուք մեր աչքի լոյսն էք. մեր թաղն և պսակն էք. մեր լաւ զօնաղ էք, էնպէս զօչաղ էք, որ դուշն՝ ծառի վերայ նստած, առջն քնած, աղուէսն՝ կանգնած, ալապտարակն՝ չզարթնած դէլն՝ բնումն պարիսած թիֆանկով կը խփէք, ձեր թիֆանկն փուլատ է, թուրն երկաթ, նարաղն ոսկւոյ զաթ, վա՞յ ձեր վերայ հօրէս նանէն խօսայ վատ. սառուցով գինուոյ մնայ ձմեռն հասրաթ, ասացէք ամէն:

Քիշմիշն խաղողի մաքուր անապական շերիցն միշտ լըցըրած կարասի. սուրբ Պանդալէոնի վակասի. որ թաղած է ի լեառն Ամարասի, սուրբ Հռիփսիմէ կուսի հաղած կերպասի, Անտոն ճգնաւորի հաղած նարաղի, օձապաւաղանի Մովսէսի. սրբոյն Դաւթի սազմոսին, զանգակատանայ սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի, նախավկայի Ստեփանոսի օրհնութիւնն և շնորհն գայ հասնի ձեզ վերայ, ով Զարաղաղցիք, ասացէք դուք ամէն:

ՆՈՐ ՊԱՏԱԶԻՏՈՒ
ԳԱՂԹԱԿԱՆ ՄՇԵՑԻՈՑ
ՆՇԱՆԴՐԷՔՆ ՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՆՈՒԷՐ ԽՈՆԱՐՀԱԿԱՆ
ԻՄ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀՕՐԵՂԲԱՅՐ
ԲԱՐՍԵՂ ԱՂԱՑԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՑՆ
Ի ՍԵՆԵՓԵՐԻՄԱՑ ԱՐԾՐՈՒՆԻՈՑ

ՆՇԱՆԴՐԷՔ

ԿԻԿՕՑ *Նստած չքուխ կքաշէ.*

ԲԱԼՕՑ *Կիկոյի կնիկը.*

ԲԱԼՕՑ. Քա[1], մարդ, դոր[2] ճամբիր[3] մը[4] Գրբօն, ըմնայ[5] վալլայ իմաղ էնեմ[6] զաղէմ ուռնեմ, չըմ կանայ ղերեսնի յիշ-կեմ[7], քօրբէն յար[8] իրկուն չօլերնի մանգիքայ : Ոաղբրմի խօրդ, մարդ, գոր գնաց մը Գրբօն հը՞ . . . .

ԿԻԿՕՑ. Տօ կնիկ, չմնայ ծուերեսս[9] ըրայ անօթի փի՞ծենք[10] Ասուած տղէ մը տվե օր, դատայ, բերայ, ուտենք. Գրբօն ճը-ժերի[11] խնա դացին զարանի վարեն : Սըբ Կըրբի[12] թօփ է[13] լէ ղէրկսի չըմ դաուցնի, տղէսի խասիրայ[14] փամիկս կայնուկ. . . .

ԲԱԼՕՑ. Քա մարդ, ողորմի խորդ, յիշկայ[15] ղխդէս[16] : Դու խալիվարես ես լէ պատվըցէրէնք, արի մը մեղքնի մը վզէն[17] խանենք[18]. արի պսակինք Գրբօն. : Նանէն մեռնի արէվուդ, օրթի, յիրկնեց[19] օր դիդայ[20], կնատի վըր թնդրայ[21] շըթան[22], գիշկայ դխտէս ու դէն[23], մէկ լէ տեսնաս օր, ախ վախ քաշեց

1, 2, 3, Ոնր ուղարկեցիր. 4 մեր. 5 չդիտեմ. 6 ուզց անեմ. 7 մտիկ անեմ. 8 մինչեւ. 9 դժվել ես. 10 բաս քաղցած մնանենք. 11 Երեխերանց հետ. 12 սուրբ Կարապետ. 13 թոփիցն էլ երեսս չեմ դաուցնի. 14 հասկա. 15, 16 մտիկ արա ինձ. 17 մեր շնքիցը (վրիցը). 18 հանենք. 19 Երեկոյեան. 20 որ գդայ. 21 թոնդիր. 22 թոնդրի չորս բոլորքը. 23 մտիկ ա տալի չորս բոլորը :

էլաւ գնաց մը չ[1] տավընտրուն։ Կեղնի օր մը տղի յաչքնի ընկեր վը[2] տէրտէրի աղջկան։ Արի՛ ուզենք մը[3] տղին։

ԿԻԿՕՑ։ Չմնայ ծուերես։ բա տէրտէրի աղջկինի բերիմ վը գլխուս ամալ[4]։ աչքիրնի քօռ։ Ջան լէ չկայ օր քէլայ[5]։ Հօրին[6] թաժա-ֆեանդայ ռէանի[7] մաղկուլ[8] մարդայ, օր զաղջկինի չի տայ զիմ տղին։ Ամալ[9] աշխարհ լէ դինայ, օր համբայ[10] կիկօն օջաղ ա, օջղն տղայ ա, դովլաթսի զէնոր դովլաթէն շատ։ զէն լէ համբայ ա, ես էլ համբայէնք, զըմ[11] օէվաղավարնի[12] զէնորէն շատ, տեսար մը քալաշ դոմէշն, էրէկ օր չօքաւ, էմալ զօնթեց օր, սամինի[13] ճօճայ, ռէսի դոմէշնի կայնաւ, լեզուն թալից դուս։ Վալլա՛յ, յէս թամուզ քերիստոնեայէնք, մը տղէն էլ էմալ։ Թադաւորի աղջիկ չէ օր ուզեմ կիդայ Տէրտէրի աղջիկ, հահ՛, ըրայ յարէս օր մուրուսի սիպտկուցուցի օր էթամ, գամ, տէրտէրի քօռ աղջկինի ուզեմ, վայլըմ՛ն բավ՛օյ[14]։ Ռէսի աղջկինի կառնեմ օր ռաֆաթենի[15] օր զանայ[16], թոնդիրնի ճօճայ, խօնար վախկոտ, յար իրկուն օր խօսցուցես, չխոսայ։

ԲԱԼՕՑ։ (Ուրախանալով) Խա՛ իմալ[17] դինաս, էմալ[18] էրայ։ Խնդրածնի[19] ճամիկենք Ռէս կնօջ։ • • •

ԿԻԿՕՑ։ Կնի՛կ, կնի՛կ։ յիշկայ[20] տես, վով դիքայ։ զթավլի դուռնի բացին։

ԲԱԼՕՑ։ (Դուռը բաց է անում) Մկոյի մէրն ա։ (մոնաւ մէ մի պառաւ կին)։

ՊԱՌԱԻ ԿԻՆԸ։ Բարի օր ձզի։

ԿԻԿՕՑ։ Ասսու բարին, նանէ, յուստ դի՛քաս, նստի դաս[21]։

Պ։ Կ։ Օ՛ֆ, օղուլ (նստելով)։ չմնայ, գայէրէնք Ջաղացնի, ցորէն աղէնք, օր քանիմ լօշ թխենք։

ԿԻԿՕՑ։ Ենանէ, դինաս ի՞նչ կայ։ Անուան մռնիմ։ Սը՛ր կըրըբի (խաչակնքելով) օր յաչողայ։ ես քէ հաց լէ կիդամ, ցորէն լէ • • •

Պ։ Կ։ Էդ իմա՞լ բանայ օր • • •

1 Մէջ։ 2 վրայ։ 3 մեր։ 4 պատիժ։ 5 որ մանդայ։ 6 ընչի։ 7 քնելվա (старшина)։ 8 հողատէր։ 9 բոլոր աշխարհքը։ 10 մեծ երկիր տիրող։ 11 իմ։ 12 рочатый скотъ։ 13 լուծ։ 14 վայ ինձ հայր (քրդերէն)։ 15 որի վրայ որ լոշը փռումեն որ թոնդրին խփեն։ 16 խփել։ 17 ոնց որ գիտաս։ 18 ճնպէս։ 19 մոցիքուլ (պառաւ կին)։ 20 մտիկ տուր։ 21 նստի այս տեղ։

ԿԻԿՈՑ· Կնիկ, ասա՛, հորին չքա՞ս ասի ։

ԲԱԼՈՑ· Հալլայ էս զլխանց, էս չուխտ չորաբնի[1] խալաթ[2] քզի ։ Եավաշ, եավաշ դնայ զիսը Ռէսի տուն· ասա՛, վալլայ, զիմ քավոր Կիկոն, քավոր կին, ձեռտի, կպաքէն· էս ղանդնի, ձզի շարբթցու կճամվխեն[3], բարև լէ կէնէն, կինտրէն օր ձըր ախչիկին տաք էնոնց տղին ։ Խա՛, համա էսմալ, ինչ օր կասեն, դքաս դա[4] մեր տուն ։

Պ·· Կ· Իսա՛, մերիկ, իմալ կասես, իմալ կենեմ ։

ՔԱՀԱՆԱՑ· ԿԻԿՈՑ· ԲԱԼՈՑ· ԴԸՓՈՑ (որդի Կիկոյի Բ·)

ԵՒ ՊԱՌԱԻ ԿԻՆ·

ԿԻԿՈՑ· Նանէ՛, իմալ եղա՛ւ, ի՞նչ կասայ ։

Պ· Կ· Իմալ օր քավոր կին Բալօն խրամանք էրաւ, էմալ ասի, զանդ լէ տվի ։ Ռէս կին, կասա, «չընայ[5], ռեսնի զիդայ խարցու�, տենամ, ի՞նչ կասայ ։ Ռէս լէ էկաւ, զէնօր Ռէս կին չընայ ինչ փափստած· Ռեսլի բառաց վըր[6] կնդան, կասա, նանէ կասա, կասէս Կիկոյին, յես էլ դէն[7], մենք խնամի ենք» ։

ԿԻԿՈՑ· (Ուրախանալով դէպի իւր կին) Կնիկ, չասի օր կեդայ[8]· հօրի[9], չըմ դինա, ես վովենք· տո՛ տա՛ Դըփոյ ա՛ր դ՛աս ։ (Դաբօն մնտենուումէ)։ Տէրտէրի աչն է ա՛ռ ։

ՔԱՀԱՆԱՑ· Օրշնեալ եղիցիս ։

ԿԻԿՈՑ· Մըգայ զըմ ձեռ լէ պաքայ· ադէիդ[10] ձեռ լէ պաքայ · · · ես լէ քո մեր էլ պառվըցեր ենք, էսօր յէքուց կերթա՛ք էն հանդէն[11]· խօքուս յէտի պարտք լէ կատարիմ։ Ցես օր նշանդրէք կեղնի· ձըմրուան, Ասսով· տէրտէր քէ կիսաքայ· մէ աղէկ խարս եմ ճարէ· գինա՞ս, վեր[12] աղջիկնայ ։

ԳԱԲՈՑ· Զըմ դինայ, ափոյ[13] ։

ԿԻԿՈՑ· Ռէս Մղոյի աղջիկն ա, անուն լէ Գուլէ ա, բոյնի· կասես, Ֆիտան[14] եղնի, օր կճաճկըտայ[15], յաժմաքար կկտրեն[16] հայրան կեղնին[17] զէնօր[18]· յաճկերնի ահա՛, էսղտայ· Ջոչ Ջոչ[19] թշերնի կարմիր, թերվերի խաստութիւն, ահա՛, կասես գերան եղնի, ախպէր, լեյլու մաջլուումա, տո՛, խօ աղչիկ չէ · · · Դէ՛,

1 Գուլրիք· 2 ընծայ· 3 կուղարկեն· 4 դէպի· 5 չդիտեմ· 6 կնոջ վերայ· 7 սըրանից, յետոյ· 8 կտայ· 9 ինչու· 10 մօրդ· 11 կը մեռնենք· 12 ում· 13 հայր· 14 վարդի ծառ· 15 կոտրտվելով մանգալ· 16 հիանում էին· 17 մատաղ էին լինում· 18 նրան· 19 մեծ ։

հէլ դուս, ափոն քէ զորբան։

ԳԱԲՕՑ· (Դուս դնալով) Ադէ, ար դաս բան կասեմ։

ԿԻԿՕՑ· Տօդա, տէրտէրին թաս մը արախ քէ տօ։

ՔԱՀԱՆ· Զուզա[1], ախպէր, չուզա· էս օր պատարագիչ էնք· (սրաղը բերում են· քահանէն խմում է)։

ԿԻԿՕՑ· Օրհնեա ի տէր, անուշ։

ՔԱՀԱՍ· Օրհնեալ լինիս։

ՄԻԻՍՆԵՐ· Օխնա տէր, անուշ համեցիր։

ՔԱՀԱՆ· Օվվա, զուլէր տօ, բերանսի մըռմըռուց· տօ քավորկին Բալոյ չարաղ մը քէ, բերանսի մըռմըռաց· ողոմարա[2], քավոր Կիկոյ, չըս ասի, իմալ դացիր Սըբ Կըրրբի, իմալ էդար, ուխտի ընդունելի եղնի։

ԿԻԿՕՑ· Փառաւոր կենաս, ժամի, պաղարաքի եղնիս, տէր տէր ջան աջդի խամիուրեմ։ Դացիլէ, էդայ էլ իմալ ալամ աշխար կերթայ, կիդայ։ Ցէս էնք կիդէն էր, Մօսէն էր, Ամր Մօսէն էր, Իծուկն էր, Փիծուկն էր, Շան կրծուկն էր, Հօխէն էր, Մըզրէն էր . . . շատ էնք· յիս լէ էդանց տարքարդարնէնք[3], խաքերէնք շալան թարին[4], օր կճոճկիդէնք, յաժմարքար կորէն վըր մըզի· ըրմըժէն[4] առեր էնք զեռ մըզի, օր կըխօթվինք[5] յէրքնի, դէտնիք առչեվ մըզի կդողէր։ Ա-նուան մըռնիմ Սըբ Կըրրբի, խաչխանինք յէրէանէրիս, ընդանք ճամբան . . . Ահա, մռնիմ քալլուդ, խամոր[6] խարան[7] էմալ կճոճկատէր օր Հայրան կեղնեն զէնոր տոտկներուն[8]։ Գացինք, դացինք, շատ-քիչ, Ասվաց գինայ, դացինք, յիջանք մի աղի դուռ . . . .

ԲԱԼՕՑ· Տէրտէր, աչուդ զուրբան, քէլէք երթանք մեր խարանի տէնանք։ Մարդ յէլ վէր։

ԿԻԿՕՑ· Կնիկ, յար[9] դաս, (ցած ձայնով) նշանը յի՞նչա· . . . քո ջոջ մատնիքնա, խա՞ . . . լաւ, մատնիքնի, մէ զանդ մէ փարչ արախ, չարաղ տու խոյ խոտաղնի[10] բէրայ· տէրտէր համեցի էլ վէր (դուրս գնալով)։ Տօդա Գրբոյ, գնայ ձիթխաց[11], տէ ի՞նչ կէնէն։

1 Չի հարկաւոր. 2 Ճշմարիտ. 3 դլխաւոր. 4 երկար արխալուխ. 5 մլրալ. 6 կը ժաժ տայ. 7 սեւ. 8 էդ ձի. 9 վոքր ոտներ. 10 արի դէնը. 11 փոքր երեխանցն (կամ մարդ) որ նստած է ըլլում առաջի լծան վրէն, 12 որ տեղ որ ձէթ են հանում։

ՌԷՍԻ ՏՈՒՆ

ՔԱՀԱՆԱՅ· ԿԻԿՕՅ· ԲԱԼՕՅ· ՌԷՍ ՄԸԳՕՅ· ՌԷՍԻ ԿԻՆ ՆԱՐԳԻԶ ԵՎ ԳՈՒԼԷ ՀԱՐՍՆԱՅՈՒ· (աղջիկ Մըղոյի և Նարդիզի)։

ՔԱՀԱՆԱՅ· (Ներս մտնելով) Օղջուն ձրդի։

ՌԷՍ ՄԸԳՕՅ· Օ՛ինա՛ ի տէր, տէրտէր Ջան . . .

ԿԻԿՕՅ· Բարի օր ռէս, քէյ լէ բարի օր Ռէսկին։

Ռ·ՄԸԳՕՅ· Հա՛յ, բարով վըրիմ դլխուն, վըրիմ էրէսուն, խաղար բարով ես էդէ, տուն տեղ էլ քէ փէշքէշ։

ԿԻԿՕՅ· Սախ էղնիս, տուն լէ, տեղ լէ քէ բումբարաք ելնի։

ԲԱԼՕՅ· Ռէսկին Նարդիզ, ձնռդի պաքեմ։

ՆԱՐԿԻԶ· Խօրիդ արքաւթէն, Ասված օրտիքդ պահայ։

ՔԱՀԱՆ· Ասված կխրամա այ, կասայ, աճեցէ՛ք, բազմացա-բուք և լցէ՛ք երկիր։ Մըղոյ պարոն Ռէս, աղջիկ մուտնես օր Ասված պախաս խրեղէն ա, մըր քավոր Կիկոյ լէ տղէմ ունայ օր աժարհար ա· դու արի դու աղջիկ լէ տու ղինոր տալն։

ԿԻԿՕՅ· Ռէս· անդաճ դի բամ ասեմ՝ պաբէ պաբ, թոռէ թոռ յար էսօր մըր տունի օջաղա, ըստուց դէն լէ Սըբ Կըրբի դերեզմանեմ տաբավինէ օր էլման օջախ կեղնի· բռնիս Մշու, յար Ստամբոլ դիմ անուննի, զըմ պաբերի անուննի խայանի ա· ալամ աշխարը լէ զըմ տալայ Գաբիոն կը ճանչնայ, պարկեշտ, խոնար, դատող· մըդայ դու դինաս, կիրաս, տուս· չըս խտայ դէլէ[1] դու դինաս։

Ռ·ՄԸԳՕՅ· Վա՛ղլայ· բիլլայ· խնամի էնք, օր խնամի, զըմ աղջիկ լէ տվի քո տղուն, տվի օր տվի· տամ խեր լէ[2] տէ, տօ-դա, արախ բէ, չարաղ բէ։

ԿԻԿՕՅ· (Փէշի տակից հանելով) Ըհա՛ քէ արախ, չարաղ· էս լէ քէ չայի դանդ[3]։

Ռ·ՄԸԳՕՅ· Ե՛ա, Յիսուս Քրիստոս, Ասված լէ դինայ օր չեղի, ես, ըբա յես մեռէր էնք զըմ տունի արախ չենի՞· դու դաս զըմ տուն նշանդրէք, դուն լէ խմիչք բերէս։ Տէրտէր աչ լէ վկայ, գոմշտանքսի[4] կվաճռիմ ես անօթի կմնամ, զըմ ղոնաղնի անօթի չըմնայ։ Ջեղաս, էս տամ դէն, տօդա բէ քաղքի ա-բախ օր բերինք էրէգ չէ մըդլոր։ Տէրտէր Ջան դուրբան ա-

1 Աժդեհա, քաջ. 2 էն էլ. 3 չայ, շաքար. 4 գոմեշներ։

ջուդ։ (Քահանէն առնում է արաղը) Հալա օրհնայ, (կանայք իրար մէջ ցածր խօսում են)։

ՔԱՀԱՆ. Տօդա պատարաքիչ էնք, տօ.

ՄԸԳՈՑ. Տ՛օ առ է. դու էլ խօ. ոտնէ գլուխ խօ չէս ուզի լուս դառնաս։

ՔԱՀԱՆ. (Արաղը ձեռքին) Պախպանեայ և յոյս հաւատացելոց, պախեա և պախպանեայ զՀասարակութիւնս տանս այսորիկ և զտանուտէրս և զտանտիկինս և քաւոր կիկոն և այլն ըստ կարգի իւրում. (խմում է)։

ԿԻԿՈՑ. Բերանիդ մեռնամ տէրտէր...օրշնեա ի տէր անուշ... (միւսները միաբերան) Օրհնեա՛ տէր անուշ եղնի....

ՔԱՀԱՆ. (Բերանը չըփչըփացնելով, գլուխը ժաժ տալով). Օրհնեալ լինի՛ք։ ... օվվա՛յ, ինչ զուլ էր տօ։

ՄԸԳՈՑ. Տօդա, չարաղ ... (քահանայն աղլուխը լքցնում է չարաղով, միւսները իրանց կարգով խմում են)։

ԿԻԿՈՑ. Խնամ Մըգոյ, խնամ կինն, Ասված լէ գինայ օր էս պդի զըմ խարանի տենամ։

ՄԸԳՈՑ. Կնիկ, յիլ վէր։ (Կնիկը դուս է գնում)։

ՔԱՀԱՆ. (Քանի մի ժամանակից յետոյ) Ծարվըցանց, տօ, տօդա ջուր տու խմենք։

ՄԸԳՈՑ. Եա՛, հօրին Ռէս Մգոն մեռերա օր տէրտէրնի ջուր խմայ. տօդա տրախ բէ։

ՔԱՀԱՆ. Ախպէր չուզայ։ (Բերում են արաղը, քահանէն իրը չկամելով, ձեռը պարզում է, թոյլ վեր է առնում և մինչև բաժակի վերջը խմում է, նստոնները միաբերան՝ անուշ տէրտէր)։

ՆԱՐԿԻԶ. (Աղջկայ ձեռից քաշ տալով ներս է բերում) Ահա էս լէ ձըր ամանաթնի ... տէնաս, խընամ Կիկոյ զէմալ աղջիկ կպախեմ. քնց չիմ աչքեր լէ առաւել կուզենք. քէյլէ[1] գուզեմ, օր դու լէ էս մալ[2] պախես։

ԿԻԿՈՑ. Ջան. Եարաղանութ[3] ղուրբան աղջիկ. ածղըհար (մոտենալով աղջկան, համբուրում է գլուխը և մատանիքը դնում է մատը, նմանապէս և Բալօն։ Ամենեքեան միաբերան) Ասված շնորհաւոր անայ։

ՔԱՀԱՆ. Սուսէ՛ք պահպանիչմ ասեմ՝ «Խայր մեր օր յեր-

1 Քեզանից էլ. 2 Էսպէս. 3 ուռեղծող։

գիս ես սուրբ, եղեցի անուն քո եկեսցէ, արքայութիւն քո եղեցի, (երկար շնչելով և բերանը ժաշտալով)· · · · և թող մեզ զպարտիս մեր և մեք թողումք պարտապանաց· զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։ Շնորհաւոր նշանդրէք· մէ բարձի ծերանա՛ն, սախ եղնին։ (Ցոցեյ հանումէ մէկ աւետարան և նստողները համբուրելով տալիս են քանի մի դրամ)։

ԿԻԿՕՑ· Տէրտէր՝ Ջան յէլ էթանք։

ՔԱՀԱՆ· Օղջուն ձրգի, մնա՛ք խաղաղութեամբ։

ԿԻԿՕՑ· Խնամ Մըգոյ, Ասված մըր խնամութունի խաստատ պահա, խարս Ջան քալլուդ մեռնիմ։ Խոչալ յէլ օր յերիշկէն, էրնէկ տան զիս։

ՄԸԳՕՑ· Բարով էգա՛ք · · · (դուրս են գնում)։

ՀԱՐՍԱՆԻՔ

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ (խինադրէք)·

ՄԱՐԴԿԱՆՑ ԺՈՂՈՎ ԿԻԿՕՑԻ ՏԱՆ

ԿԻԿՕՑ, ՔԱՀԱՆԱՑ, Ա· Բ· և Գ· ԲԱՐԵԿԱՄՆԵՐ և այլն։

Ամէնքն էլ չորս բոլորը նստած պատերի մօտ իրար մէջ հանդարտ խօսում են։

ԿԻԿՕՑ· (Ներս մտնելով) Դէ զորբան ձզի աղաբներ· դէ քէֆ էրէ՛ք, իմալ աղաբ էք աս, այ դտի պառվութեն տունդ ակօլի[1], թէ ջահիլ կեղնէինք էմալ քէֆ կէնէինք սր աշամ աշխար դէր թամաշ· (ուրախանալով) Տօդա զռնաչի զօվնորմ առ[2] տէնամ (զուռնաչին սկսումէ պատրաստվիլ)։

ՔԱՀԱՆ· (Կամենումէ խմել և պատճառ դտնելով իւր մեծութեան) Քավոր Կիկօյ, սախ օր յոդայ ման գիդաս, թասմ արաս խմայ· թասմ արաս ավէք քավորջ։

ԿԻԿՕՑ· · (Թասն առնելով ըստ սովորութեան) Տէրտէր Ջան յոտացդի զորբան դու օխնա առէջ, դու անուշ էրա, աջտի խամբուրիմ· (տալիս է արաղը քահանային)։

ՔԱՀԱՆ· (Առնելով) խաթրէտի չմինցնի, թասնի չիս, Ա-

1 Քանդուի, 2 զոշնդ պարն ածա։

սու բարին լէ քե ժողովուրդ սակ եղնիք, խնամ կիկոյ օջաղ-
ատի խաստատ եղնի, էս օրս ամենեցուն փոխ եղնի (խմուտէ)։

Ա. ԲԱՐ. Կիկոյ, թաժայ թաղվորնի դորա, կանչայ դայ.
տէնանք։

Բ. ԲԱՐ. Գլխուդ մռնիմ քավոր Գըբոյ, էմալ տղէմա օր
էրժանի ա թաղվորի թաղթ բաղմենայ.

Գ. ԲԱՐ. Տ՝ օղա Հարօ, ան Գըբօն դորա դացե[1] (նաղարա-
չին և զուռնաչին սկսում են շէրէվանի վռնի վռնի (անուն
պարի) ամէնքն էլ իրար ձեռ բռնելով սկսում են պար գալ)։

ԺՈՂՈՎ ԿԱՆԱՆՑ

ԲԱԼՕՑ. Ա. Բ. և Գ. ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՔ և այլն.

ԲԱԼՕՑ. Մէրիկնիր ձղի հայրան եղնիմ կերէք, խմէք (մէ-
կին տռանձին) քա խարս հորի[2] ղքիթ մռութտի կալներիս
քա տէնամ ղերեստի, կասին շատ խորտես։ (Հարս, որի բե-
րան կալնած էր չի թողում, որ բաց անի)։

Ա. ԲՐՀԻ. (Հարսի կէսուր) քավոր կին Բալօյ, ղորանայ ղըմ
խարանի, տաս տարի ա օր ընձի խարսնութին կէնայ, դըռ չուր
մկայ[3] օչ էս, օչ մեր քուլֆաթնի[4] ղէնոր էրեանի ճնանսի, ղէ-
նոր ձէննի լէ ինչի։

Բ. ԲՐՀԻ. Բա, էմալ խարս կեղնի քիրիստոնի խարս ա, կա-
սես Ուռուսի հառջայի[5] խարսնիրնա օր . . . . . յէրէկ
չէ մլլօր դացէրէնք, ձղի պախատան սըբ Գէվորդ, մկ լէ տե-
նամ օր ինչ տէնամ, պիդայ ճօճկատալէն մէ սիլտակ էրէս, է-
րէսնի բաց, չուրմ դաս[6] (ցայց է տալի ուսերքին) էմալ կբռ-
ռէր օր էս կվախէնէնք, ընկէր էր յառէջ մարդ լէ չմնայ, փէ-
տէր ինչէր բռնէրէր ձեռնի, էմալ խեղճ խեղճ էտէվէն կէր-
թէր, մկ լէ տէնամ օր կնիկնի դարձաւ էմալ բռաց վըբ
մարդուն, մարդ լէ էմալ բշավաւ[7] չոր չոր դարձաւ . . .

ԼՈՐՇՆԵՐՆ. Վ՝ուշ քա, խոլս էնոր գլխին, ղէնոր մալեր-
նի կարիմ, դնիմ ղէնոր ծոց, հորին կբռռէր[8]։

Գ. ԲԱՐՀԻ. (Բռնելով ծոցից և ժաժ տալով) աման, աման,
աման, աման, Աստած աղատայ մէրիկ էմալ անղդամնիրից, մենք

1 գնացել. 2 ինչու. 3 մինչև հիմայ. 4 գերդաստան, անդդամ. 6 մինչև էս տեղ. 7 նեղացաւ (обидѣлся). 8 կը բղավէր։

օր էմալ եղնենք մըր մարդիքնի, մըզն սաղ սաղ կփիճուցեն։ (Այս միջոցում միւսները ուտում են, իրար մէջ խօսում են և ծիծաղում են, բերում են արաղ խմում են այսպէս օրհնելով· «ինամկին բալոյ, կամ քավորկին բալոյ, կամ սանամէր բալոյ· սախ եղնիս Աստած տունդի շէն պահայ· բարով ուրախութիւնով խարտոի բերես, մէ բարձի ծերանան, խարսիդ ոտնի ուղուրով եղնի (միւսներին) փոխը ձըր ՇՀէրին եղնի»։

ՄԷՔԱՆԻՍԸ· Ինչոր ասին, Աստած լսող կատարող եղնի։

(Իմշեղնից հետոյ սկսում են ընթրիկը· որից յետոյ բերում են հինին և ամէն աղաբ տղէրք և նորահարսներն պարանն ձեռներն հիմայ դնել)։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ պսակի գիշեր

Այս գիշերն հարսանիքը լինում է փէսի տան և հարսի տան։ Կէս գիշերին փէսան բազմութեան հետ գնում է հարսի տուն և այն տեղի բազմութիւնը վեր առնելով գնում է եկեղեցի)։

ՄԱՐԴԿԱՆՑ ԺՈՂՈՎ ՓԷՍԻ ՏԱՆ

ԿԻԿՈՑ, ՔԱՀԱՆԱՑ, ՔԱՎՈՐ, ԱԶԱԲԱՇԻ, ԹԱԳԱՎՈՐ (փէսան) բարեկամք·

(Բազմութիւն պատերի կողմն նստած իրար մէջ հանդարտ խօսում են և խմում են այսպէս խօսելով· Բարձր ձայնով· սախ եղնիք, փոխը ձըր ավլատնիրուն եղնի շնախաւոր խարտնիս եղնի, աղաբնիդ, փոխը ձըզի եղնի» քահանայի հրամանով բերում են փէսայի շորերն օրհնելու· Բերումն սինին, մէջը լցրած զանազան չարաղներ որոց վերայ դրած է փէսի շորեր, շորերի վերայ, մէկ սուր, մոմ, և մի քանի մարդերից տուած պարգևներ· Քահանէն քցում է իր վերայ շուրջառն փէսան և քավորը չոքում են սինու մօտ և ողջ բազմութիւնը կանգնում է ոտայ վերայ, քահանայն սկսում է կարդ, յետոյ օրհնում է մէկ ման դինի, որի կէսը խմում է փէսան և կէսը քավորը, կարդ կատարելուս յետոյ ամէնքն միասերան) «Աստած շնախաւոր տնայ»։

ՔԱՀԱՆ· Դէ, օրշնեալ լինիք ժողովուրդ· հրամայեցէք· խամբուրիք· (ամէնքն համբուրում են տալով քանի մի դրամ· յետոյ ծախսում են սուրը)։

ՔԱՀԱՆ· Մկայ վեր[1] քէֆնա աղաբաշի[2] եղնի, վով ինչ կիդայ թրուն ժամի օդուտ (երկար ժամանակ ամէն լուռ են կենում)։

1 Ուս. 2 բացի խաչ եղբօրը, մէկ մարդ էլ ընում է, որ առնում է սուրը և միշտ թագաւորի հետ է լինում։

ՄԷԿՆ· · Տէրաէր փարչմ ձէթ · · · ·

ՔԱՀԱՆ· Փարչմ ձէթ · · · էլ վոմ · · · դէ ղուրբան ձղի աղբրնիր (երկար ղուրթիւն)։

ՄԻԻՍՆ· Փարչմ ձէթ, մէ կօտ ցօրին։

ՔԱՀԱՆ· Զօրանաս օրթի, էլ վով · · · ուղբաշի հորին քիթ մռութի խախերնս, բառբառայ, բառբուիթ ղորբան։

ԲԱՐԵԿ· Տէր խայր, Բալուլ փաշի խարանիք միաք կէնէինք հայ ղնիկտ ավիրի դուվաբ, խամալ բանես (հոգով և բարձր ձայնով) Տէր տէր էրկինք, ղէտինք կվառէր, վալլա, ղփարէն իմալ դարի կցանէր[1] · · ·

ԵՐՐ·Գ· (Բարձր ձայնով) տէր տէր, էրկու փառչ ձէթ, մէ օրթիկ[2] մէկլէ կուժ ժամուն (ուելի տվող չիղանվում)։

ՔԱՀԱՆ·Դէլ վեր, առայէս լէ քի (տալիս է սուրը քահանի ձեռ աղաբաշին համբուրում է, ամենեքեանք) սաղ եղնի աղաբաշին (մոնում է կիկօն)։

ԿԻԿՕՑ· Տէր տէր խմալ եղաւ, աղաբաշին վամ էս, (ցոյց ենտալէ) հա՛ քալաշ ղլխուդ հայրան եղնիմ։ Մուղաթ էլ որ ըղ խաշնի չթուցուցին թ հղվորի ղլխուց (էս աղաբարու պաշտօնն է)

. (Աղաբնիրը տանում են վիճին, որ երևսը վեր անեն, պատրաստած դալաք կանգնած է մօտ, վիճան նստում է մէջ տեղը աղաբնիրը նրան շրջապատում են ձեռներին բռնած վառած մոմեր)։

ԴԱԼԱՔ և ԱՂԱԲՆԵՐ·

ԴԱԼԱՔ· Լ ավաշէք ածու[3] անեմ (տեղ տեղ վեր է անում, տեղ տեղ թողնում) դէ աղաբներ տէնանք էս ածվին ինչ կիդաք։

1 ԱՂԱԲ Վ՝ եր փարայ · · · (դալլաք վեր է անում աղաբներն միաբերան· «ուռա՛յ, ուռա՛յ, էլա՛ւ, էլա՛ւ» այսպէս խօսալով, ուրախանալով վեր են անում թադաւորի երեսն)։

ԿԱՆԱՑ ԺՈՂՈՎ

(կանայք տան չորս բոլոր նստած, որը նստած քնած է, որը պարկած է, երեխայք բարձր ձայնով լաց են լինում տանլով «ադէ, ադէ» ծառայողներ խօսում են բարձր ձայնով եւ որանից դուրս է դալի մէկ սատրիկ ադամակ որ բան չի կարելի հասկանալ)։

ՄԷԿ ԿԻՆ· (Զարթնացնելով) քա՛ խարս, խարս, յէլ վեր խինէն կէրթայ, յէլ վեր, աղջկնիր խարանիր էլէք վեր, խինէն տարէք·

1 Փողը դարս պէս ցանում էր. 2 հորին. 3 մարդ։

(Հինէն փիլսի տանից պանում են հարսի տուն, ժողովում են աղջիկներ, հարսներ նաղարով զուռնով գնում են հարսի տուն, որ տեղ որ հարսի ձեռներումն գնում են բերած հինէն. այն տեղից վերադառնալով փիլսի տուն, տասն սկսում են ձեռ ձեռի տված պար գալ մինչև մէկ կամ երկու ժամ ընտած ձեռներին վառված մոմեր։ Պարից յետոյ կանայք և մարդիք գնում են իրենց առաջվան տեղերն և սկսում են իրար մէջ հանդարտ խօսալ. ժամանակէ առ ժամանակ բարձր ձայնով մէկն մէկ բան կասի և կը լռանայ)։

ՄԱՐԴԿԱՆՑ ԺՈՂՈՎ

ԿԻԿՕՑ, ՔԱՀԱՆԱՑ, ԱԶԱՐԱՇԻ և այլն։

ՔԱՀԱՆ· Քավոր Կիկոյ, նստի դաս, ասա՛ տէնանք իմալ գացիր Սբրբ Կբրբբի, խրլսցու[1]։

ԿԻԿՕՑ· Իսա՛, աջուդ մանիմ տէրտէր ջան հալայ թասամ էրար անուշ էրա՛ (քահանէն խմում է) · · · էլանք դուս, էս էնք, Կիկէն էր, Մօսէն էր, Ամր մօսէն էր, Ինուկն էր, շան Կրծուկն էր, Հօխէն էր, Մկրէն էր շատ էնք, էս լէ էգոնց սարքարտարն էնք· · · էհ գացինք, գացինք ինչանք աղիմը տուն էլաւ դուս աղի կնիկնի կասայ։ Ինչ խաբար ա, կասիմ, բարաչօղում քլի խանում, օթևանմ տաս քօ խօր խօքուն։ Մը տանք տուն գացինք, ռէզվանք[2], նստանք վերայ տախտին։ Մէկ էլ տէնամ օր վառին զթօնիրնի, զջուրնի լցին մը ջ բարօշուն[3] դրին վը խէչրկաթինի[4], զմիանի զանին, զանին, արին չմնայ[5] ինչ, վէն լէ դրին մը ջ թասուն խանումնի զթեվերնի քշտեց[6] չուրմը դաս, զանից, զանից արաւ, խեռի քենէ, խեռի խատաղաց շան ինք, գինաս, խա՛, քօ կարկնի վկայ եղնի, խանումնի կլօլեց զէնի մէկ մէկ թալեց մը ջ բարօշուն, մէ փըշուր մնաց մէկ լէ տէնամ օր կլորնիրնի չէնկէլն էր, զէն խեզտէր, զէն կէլնէր զէն խեղտէր, խանումնի զբարշնի վերցուց դէն, կլորնիների փավվայ[7] փիճան, խա էնաժամ։ Բէրի մրզի էս լէ կճզտուցէնք ու կուտէնք, կճռտուցէնք ու կուտէնք, մէկ լէ տէնամ օր մէկնի փախաւ, էս էլանք շուն զէն էլաւ կատու էս կվազնէնք օր բռնէնք, լարի յարի քունջնի, բռնի մը ջ էզուանդներուս ճզտուցի թալի բէրանիս, անծամիլ ավի, (ամէնքն ծիծաղում են)։

1 Վերջացրու. 2 կարգով նստեցինք. 3 պղինձ. 4 խաչաձև երկաթ, որ դնում են թոնրի վերայ. 5 չգիտեմ. 6 վեր քաշեց. 7 գոլորը միասին։

ԿԻԿՈՆ· (Հպարտանալով) ըրայ, էս էմալ տղամարդ էնք օր ղԹաննի անվչիլ կկամէք (սկսում են բարձր խօսալ)։

ՄԷԿՆ·· (Հարիվանին) տօ սուս տա՛, տէնանք ինչ կասայ խնամ Կիկոն, դու լէ մառնիս ձրը գոմըշտանք լէ։

ԿԻԿՈՑ· Զէտոր տնէն էլանք, ընկանք ճամբախ, այ դիտի խամար շորաղ քէհլան· ճաճկատան ջսրաղ։ Տէրտէր Թվանքմ ունէնք ալԹի ուստի խառայ օրԹլաղ խէջրկաԹ, Թիզմը ծէրէն կարուկ Մաշալլայ, Թիզմը բէրնեն կարուկ բարիքալլայ· · · խա օղորխ· (Ներս է մտնում աղաբաշին)։

ԱՂԱԲ·· Սանախէր Կիկոյ, Թագավորնի շորերնի խաքն, կանէ դաս։

Ք·ԷԿԻԿ·Կանչայ դայ։

(Մտնում է փէսան հագած բաւականին մաքուր, ձեռին բռնած կարմիր աղլոր, աջ կրծքին մոմը վառած ձեռին կանգնած է քաղոր, եւ ձախակողմը-Թուր եւ վառած մոմը ձեռին կանգնած է աղաբաշին)։

ՆՍՏՈՂՆԵՐԸ· Թագավոր Թառնա։

ԱՂԱԲ·ԼԲԱՎ·Ասսու դառնա։

ԿԻԿՈՑ· (Նստողներին ցոյց է տալի որդւոյ վերայ) խմալայ Ջան·Ջան · · · (մտածելով) փառքիմ քէնէ Աստուած։ Տօ դա Թաամ էրաղ բէ՛ օր տէրտերն օխնա, էս լէ խմենք։

(Արաղ բերում են, առաջ քահանան խմում է ըստ սովորութեան, յետոյ Կիկոն։

ԿԻԿՈՑ· Տէրտէր լուսա էԹանք ժամ։

(Ամէնքն վեր են կենում, գնան խնամոնց տուն)։

ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎ

(Ըստ սովորութեան, պատերի մօտ նստած ամենքեանք համարեա թէ քնած են, յանկարծ զարթնում են գնալ խնամոց տուն։ Փէսան բաղմութեան հետ գալիս է կանանց ժողով. Թագաւորն իր քավորի եւ աղաբաշու հետ կանգնում է առաջ, եւ նրանց առաջնորդ մընում է մեծ դատարկ տեղ նաղարչն եւ զուռնչն սկսում են մէկ Թէթեւ պար ածել։ Մէջ տեղը դուրս է գալի մէկ զեղեցիկ նորահարս աղջիկ, բռնած մէկ ձեռին կարմիր մոխամառ եւ միւս ձեռին ամանն լի անուշահոտ դեղով. պար գալու ժամանակը սկսում է շաշ տալ այն դեղից շըրջապատողների վերա եւ նոքա չունին իրաւունք սրբել կամ ցոյց տալ նշան բաւականութեան, պարից յետոյ աղջիկն մախմառն կապում է փէսի սրի վերայ, յետոյ ահագին բաղմութիւնով գնում են հարսի տան։ Այս դիշերն հարսանիքն լինում է հարսի տան, բայց շատ մօտիկ բա-

բեկամներին լինում եւ առանձին հետաքրքիր բան չի լինում այս տեղ, միայն ծախսը, ինչ որ հարկաւոր է վիսան պարտէ տալ։ Լսելով նաղարայի ձայնը պատրաստվում են ընդունել դալղերին դռանը։ Բաղմութիւնը մօտենում է, երգելով զանազան երգեր տաճկերէն եւ հայերէն։ Դռան առջեւն էլ ձեւ ձեւի տված պարը են դալի (այս պարի անունն է զ ա փ ի) յետոյ մտնում են տուն։ Կանայք սկսում են հարսի շորը հագցնել, քահանան խնդրում է որ չտապին, կանայք մէկ կողմից դուրս են բերում հարսին ամենեին ծածկած ոսկի մինչեւ գլուխս զանազան շորերով եւ մյուս կողմից աղջիկներն դուրս են բերում փեսային։ Քահանան կատարում է եկեղեցական կարգ. ապա առնում ընձեռն եւ այլն։ յետոյ սկսում է մէկ դեղեցիկ աղջիկ հարսի առնից պար դալ բռնելով ձեռին մէկ ոսկեայ անուշահոտ դեղ եւ կանանչ մախմաւ, կանանչ մախմաւ կապում է թագավորի սրտին կարմիրի վերայ այնպէս որ լինի խաչաձեւ*, յետոյ գնում են եկեղեցի։ Այս բոլոր երեւում է դառնությունն, որովհետեւ հարսի ծնողքը սատակ լաց են լինում)։

ՆԱՐԿԻԶ։ (Լաց լինելով) խնամ կիկոյ, քիչ ասեմ խնամ կին, դուք եղնիք ձըր որթու արեւնի, դուք եղնիք ձըր խոքին, լաւ պահէք զըմ քորքէք։ Ասուած լէ զինայ ազիզիմ պահե զըմ աղջիկնի, լաւ պահէք, խէր ա ձըզի։

ԲԱԼՈՑ։ Արեւայէն մոցի1, էն ժամնի, օր քնց զիմ աչքնի առավել կուզիմ։

ՄԸԿՈՑ։ (Կիկոյին հանդարտ) խնամ կիկոյ, զէն լէ դու զինաս, դու եղնիս էս սուրբ խաչնի, դու եղնիս պառվու տղու դէրէզմաննի2, օր խամբուրես, էլ չըմ զինայ էմալ պահես օր ասէլիք եղնի, օր էս լէ դու լէ թեվ թեվի քէլանք։

ԿԻԿՈՑ։ Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վալլայ բիլլայ դու զի լէ չըս ճանչնա բա՜, եա՜, հօրի էս քիրիստոնայ չէնք, խօքի չունէնք, աւաղն չունք մոէ, խա՜, էս Հօխու Կիկոն չէնք, ալամաշխար լէ զինայ, էս չըմ խարանի փիս պահե՞մ։ Յիշկայ զրես դէս, ոէ նաս, սիպատակ մուրուս եմ։ Հիթասուն տարի ա օր աշխարիմ մոե, զինամ տլվադ3 լէ ինչ ա, եատ լէ ինչ ա։ զըմ տլվդու մաշնի օր ցավայ, զըմ աչքնի կցավայ, ոէնաս զէնա դմբէթնի զի խըռով եղնի, թէ ես զըմ խարանի զըմ տղի բարէբար չուզիմ, թէ ուզի, ուզի, թէ չէ, թէ չուզի արի ալամաշխարի առէջ,

* Նոպէս է լինում Նորարիէսի կանաչ ու կարմիր կապերը։
1 կացիր։ 2 տուրբ Կարապետի դերեզման։ 3 զաւակ։

բռնայ մուրսկս կսմալ ասա՝ Մղոյ, դու քրիստոնայ չես, Աստուած քեզ խռով կելնի։

ՆԱՐԿԻԶ. Խնամի, զըմ աղջկնի խունարով[1] աղջկայ դինաս, կար լէ ղէնայ, խաց լէ կթխայ, ձգուրմ լէ կղանայ.. ինչ ասիս ասան բան, զըմկնի լէ ղինայ.. տունդի կղարդրա։

ԿԻԿՕՅ.. Աստուած, Աստուած, վով չռղայ . . . դէ խընամոիկ արխայնն եղէք (ամէնքին) քէլէ՛ք։

(Գնումեն եկեղեցի, փէսան հարսի աջակողմից, հարսի ձախակողմը աղաբաչին, թաղաւորի աջակողմից քավոր, յետոյ մեծ բազմութիւն կանանց, յետոյ—մարդկանց, աղաղնեին փէսի առաջեւը գնալով երգումեն պսակից յետոյ գնումեն փէսի տուն եւ մանելով դռանները երգումեն

Թաղվորի մէր թուս արի
Տիս քեզ ընչեր իմ բերե
Տախտ ավելօղ իմ բերե
Գլխս տմբօղ իմ բերե
Աման լըվօղ իմ բերե
Փլով էփօղ իմ բերե
Լոշեր թխօղ իմ բերե
Կովեր կթօղ իմ բերե, եւ այլն։

(Մանելով տուն, դռան մօտ գնումեն մէկ ման, որն որ փէսան պարտ է աջ ոտով կոտրել, նա եւ հարսն, պարոնին աջ ոտով մանիլ տուն, ցետոյ սկսում են հացկերութիւն եւ միւս առաւօտն գնումեն խրեանց տներ)։

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ (որձի դիշեր) ՄԱՐԴԿԱՆՑ ԺՈՂՈՎ

(Այս դիշերս անուանւում է «Որձի դիշեր» նրա համար որ պսակի դիշերից յետոյ հիւրերը գնում են խրեանց տները, եւ միւս օր կէսօրուայ ժամանակն կրկին ժողովումեն բերելով խրեանց հետ հաւ, գառ ոչխար ով որ ինչ կամենայ. փէսի դռան նաղարէն եւ զուռնէն ածում են եւ հիւրերն սկսում են մորթել խրեանց բերածը. առաջ փէսան, յետոյ քավորը, յետոյ աղաբաչին եւ միւսները։ Այս արարողութիւնը կոչվում է «Որձ դանիլ» հիւրերն նստած պատերի չորս կողմը հանդարտ իրար մէջ խօսումեն փէսան քավորն, եւ աղաբաչին կանգնած են դըռան մօտ, ամէնքէլ, խմումեն կանդնողների եւ հարսի կենաց)։

ՄԷԿՆ. Թաղաւոր սախ եղնիս, վար եղնիս, չօխ եղնիս, մէ բարձի ծերանաս, խնամի Կիկոյ յաչդդի լուս եղնի, խարսիդ

1 Խունարով.

օդնի ուղուրով եղնի, բարիկմներ վոխը ձըր ավլադներուն եղ-
նի, օշնեա 'ի տէր, տէրտէր, ժամի պատարագի եղնիս, աղարա-
նիր սաս եղնիք ազարաշի, քավոր աղայ. սաս եղնիք (խմուէ,
ամէնն էլ խմուէն համարեա նոյնպէս խօսալով) :

ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎ

(Ընտաած չորս բոլոր հանդարտ խօսումն. մէկ պատի մօտ չորս կողմը պատած մէկ տեղ կայ չինած հարսի համար, որի մօտ կան շատ աղջկներ եւ նորահարսներ) :

ՄԷԿ ԱՂՋԻԿ· (Նորահարսին) խարս, տէնամ զերեսդի (հարսը չի թողնում, բայց նա բարձրացնում է ծածկոյն որ տեսնի երեսը) քա, խարսեր : Ինչ խօրատա քա, բէրանը պոտիկ, յաչքերնի թուխ, մաղեր լէ թուխ, էն իմալ խորատա տօ, բաղդաւոր, սթարավոր, քա խարս քանի տարեկան ես (հարսը նոցա հետ չի խօսում, միայն խօսում է մէկ պառաւ կնոջ հետ, որ սովորաբար կոչումն հարսնաքուր :

ՀԱՐՍՆԱՔՈՒՐ· Կատայ տասնըխինդ :

ՄԻԻՍ ԱՂՋԻԿ· Իմալ Ջահէլա, քա օղորթմա տէնանք զէրեսան, (մատիկ տալով) քա օղորթմաս իմալ խորատա, քա խարս անթարիդ քանի ես առեւ, ինչ խորատ Ջուբայա (աղջկնի մատիկ են տալի նորահարսի վերայի շորերին, զարմանալով եւ նախանձելով խօսումն ծածուկ) :

ՄԷԿ ԱՂՋԻԿ· Բաղդավոր, սթարավոր, նարմանաղուկ[1] քիթ ռութունայ, անթարին, Ջուբէն, կասես օտ լէ գլուխ օսկէ ա, բա, ղուրբան, ռէսի աղջիկ ա, մաղուլ ա :

ՄԻԻՍ ԱՂՋԻԿ· Էրնէկ իրան, խլասաւ[2] աշխարքի ղարտէն, կէսարար, զանդին, անուշ կիսուր, մարդ լէ խորատ, դատօղ, կասես մինքանք որ յոցի քսան տարի յիշկենք որ խնդրած գայ չիդայ :

ԵՐՐՈՐԴ ԱՂՋ·· Քա սէս աղջի, ամօթ ա էտմալ չըն խօսա, ամօթ չէ որ աղջիկնի ախ ու վախ էնայ մարթու էրթալու խատար :

ՄԷԿ ԲԱՆԻՍՆ· Խա՛, խա՛, կոր, կոր, կոր վըրջանին, կասես սուրբ եղնի, ըրայ կուս պոի եղնիս, ալամ աշխար լէ դինայ որ աղջիկնի պդի մարթի էրթայ · · ·

1 քնքուշ· 2 պրծաւ·

(Ցանկարծ զաղարկն եւ զուռնկն սկսում են ածել եւ մեկ կին դալիս է հրավիրում աղջկանց եւ հարսներուն դնալ պար դալ եւ նոքա բռնում են նորահարսի ձեռքից եւ դուրս են տանում, աղարները դուրս են բերում փեսին եւ պատահում են հարսի հետ, մեկ կին հարսի ձեռը տալիս է փեսային եւ նոքա սկսումեն ձեռ ձեռի տված պար դալ, նոյն պէս եւ ողջ բազմութիւն ձեռներնին վառված մոմեր, պար չարունակվում է մինչ ցկէս գիշեր, պարի ժամանակն, ընծայ են տալի հարսին թաղաւորին եւ այն ընծայն դնում են հարսի դլխի վերայ։ Պարից յետոյ դնում են իւրանց տեղերն եւ հացկերութիւնից յետոյ դնումեն անները)։

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ (Թաղ կորելու գիշեր)

(Այս գիշերս բազմութիւն չատ քիչ է լինում, ատ լինում են միայն մօտիկ բարեկամները, քավոր, աղաբայրն եւ քահանան փոքր ինչ օտակցութիւնից յետոյ սկսում են ընթրիկ անել, ընթրիկից յետոյ քահանէն կատարում է կարդ «Թաղ կորելու» յետոյ բերում են ընծայ քավորին եւ աղաբարուն, ընծան կոչվում է «խալաթ» խալաթին լինում է սովորաբար կամ մեկ չոխա ջոբաք, կամ մեկ աղլուղ, կամ մեկ կօվ ելթ է չատ հարուստ է փեսան, ընծայում է մեկ ձի ստանալով ընծան դնում են իւրանց անները։

ՎԵՐՋ

Սինէքէրիմ Արծրունի։

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ·

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆԹԻԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. ТИФЛИСЪ, 30 Мая, 1863 г.